ՔԻԹԿՈԿՈՐԴԱԿԱՆՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հետըմպանային թարախակույտերն առավել հաճախ զարգանում են _____ տարիքում:

Ա-մանկիկային

Բ-պատանեկան

Գ-մանկական

Դ-ծերունական

2. Երեխաների մոտ քթի միջնապատի վիրահատությունների հիմնական սկզբունքներն են.

Ա-ռեզեկցիոն-հյուսվածքապահպան

Բ-ռեզեկցիոն-հյուսվածքալրացնող

Գ-ռեզեկցիոն

Դ-հյուսվածքապահպան և հյուսվածքալրացնող

3. Կոկորդի քաղցկեղի առավել անբարենպաստ տեղակայումն է.

Ա-Մորգանիի փորոքների շրջանը

Բ-ձայնային ծալքերի շրջանը

Գ-վեստիբուլյար ծալքերի շրջանը

Դ-մակկոկորդի հիմքի շրջանը

4. Քթի ֆուրունկուլի ներգանգային բարդությունն է.

Ա-սիգմայաձև ծոցի թրոմբոզը

Բ-քարանձավային ծոցի թրոմբոզը

Գ-քթի միջնապատի դեֆորմացիան

Դ-սուր ռինոսինուսիտը

5. Սեպոսկրային խոռոչի ստորին պատը մասամբ կազմում է.

Ա-քթըմպանի կամարը

Բ-ակնակապճի միջային պատը

Գ-քթի խոռոչի կողմնային պատը

Դ-խոռանների կողային պատը

6. Կոխլեար իմպլանտացիայի հակացուցում կարող է լինել.

Ա-բնածին խլությունը

Բ-հակաբիոտիկների օտոտոքսիկ ազդեցության հետևանքով առաջացած խլությունը

Գ-թմբկաթաղանթի չոր թափածակումը

Դ-միջին ականջի թարախային պրոցեսը

7. Ականջախեցու I աստիճանի ցրտահարության նշաններին են դասվում.

Ա-մաշկի նեկրոզը

Բ-ենթամաշկային բջջանքի և աճառի նեկրոզը

Գ-բշտերի առաջացումը

Դ-մաշկի այտուցվածությունը և կապտությունը

8. Շտապ տրախեոտոմիայի ժամանակ ենթամաշկային էմֆիզեման կանխելու համար անհրաժեշտ է.

Ա-տրախեոստոմայի եզրերը խիտ կարել տրախեոտոմիկ խողովակի շուրջը

Բ-տեղադրել առավելագույնս երկարացված տրախեոտոմիկ խողովակ

Գ-տրախեոստոմայի եզրերը կարել կտրվածքին, մաշկի կտրվածքի եզրերը խիտ չկարել

Դ-տեղադրել առավելագույնս լայն տրախեոտոմիկ խողովակ

9. Մակրոտիան վերացնելու համար կիրառում են _____ բուժում:

Ա-պահպանողական

Բ-վիրաբուժական

Գ-ասեղնառեֆլեքսաթերապևտիկ

Դ-ֆիզիոթերապևտիկ

10. Սուր թարախային միջին օտիտի դեպքում ձայնի լատերալիզացիան դեպի հիվանդ ականջը ցույց է տալիս.

Ա-Վեբերի թեստը

Բ-Ռիննեի թեստը

Գ-Բինգի թեստը

Դ-Լևիս–Ֆիդերիչեի թեստը

11. Էպիտիմպանիտի սրացման դեպքում բժշկի մարտավարությունն է.

Ա-ականջի սանացնող վիրահատություն՝ միաժամանակյա կամ հետաձգված տիմպանոպլաստիկայով, համակարգային հակաբիոտիկաթերապիա

Բ-թմբկաթաղանթի պարացենտեզ, համակարգային և տեղային հակաբիոտիկաթերապիա

Գ-ատտիկի լվացում հակասեպտիկ լուծույթներով, համակարգային և տեղային հակաբիոտիկաթերապիա

Դ-թմբկախոռոչի շունտավորում, տեղային հակաբակտերիալ և հակաբորբոքային բուժում

12. Ծամիչ մկանների տրիզմը բնորոշ է.

Ա-Վենսանի անգինային

Բ-հետըմպանային թարախակույտին

Գ-պարատոնզիլիտին

Դ-ստոմատիտին

13. Կիսալուսնաձև ճեղքը սահմանափակված է processus uncinatus- ով և

Ա-քթի թմբիկով

Բ-bulla ethmoidalis-ով

Գ-concha nasalis media-ով

Դ-ականակապճի pars medialis-ով

14. Մեկ խոռոչն ախտահարող միակողմանի պոլիպոզով հիվանդի համար կիրառվում է.

Ա-վիրաբուժական բուժում

Բ-համակարգային գլյուկոկորտիկոիդային թերապիա

Գ-դինամիկ հսկողություն

Դ-ներքթային գլյուկոկորտիկոստերոիդներով երկարատև թերապիա

15. Ըմպանի չտարբերակված չարորակ ուռուցքներին են դասվում.

Ա-լիմֆոէպիթելիոմաները, ցիտոբլաստոմաները

Բ-քաղցկեղները, սարկոմաները

Գ-պապիլոմաները, ֆիբրոմաները

Դ-հեմանգիոմաները, անգիոֆիբրոմաները

16. Լակունար անգինան առաջին հերթին անհրաժեշտ է տարբերակել.

Ա-սնկային անգինայից

Բ-սուր ֆարինգիտից

Գ-Սիմանովսկի–Վենսանի անգինայից

Դ-դիֆթերիայից

17. Ենթալեզվային ոսկրը և վահանաձև աճառը միացնող կապանը կոչվում է.

Ա-վահանաենթալեզվային

Բ-էլիպսաձև

Գ-սեղանաձև

Դ-մակկոկորդային

18. Սնկային ախտահարման նկատմամբ առավել խոցելի է _____ հարքթային խոռոչը:

Ա-սեպոսկրային

Բ-ճակատային

Գ-վերին ծնոտային

Դ-մաղոսկրային

19. Սուր դիֆուզ բակտերիալ արտաքին օտիտի բուժման առաջին ընտրության դեղամիջոցներն են.

Ա-հակաբիոտիկի և կորտիկոստերոիդի համակցություն պարունակող ականջի կաթիլները

Բ-ֆտորքինոլոնների խմբի պերօրալ հակաբիոտիկները

Գ-ամինոգլիկոզիդների խմբի պերօրալ հակաբիոտիկները

Դ-կորտիկոստերոիդ պարունակող ականջի կաթիլները

20. Հիպերտրոֆիկ ռինիտի առավել բնորոշ ախտանիշներին են դասվում.

Ա-քթի ցավը

Բ-քթային շնչառության կայուն դժվարացումը

Գ-քթից լորձաթարախային արտադրությունը

Դ-պարոքսիզմալ փռշտոցի նոպաները

21. Կոկորդի բարորակ նորագոյացություններին են դասվում.

Ա-տափակաբջջային քաղցկեղը

Բ-քորդոման

Գ-ձայնային ծալքերի հանգույցիկները

Դ-լորձաթաղանթի դիսպլազիան

22. Նորածինները կարող են միաժամանակ կուլ տալ և շնչել, քանի որ նրանց մոտ _____, քան մեծահասակների մոտ:

Ա-կոկորդի լուսանցքը համեմատաբար ավելի լայն է

Բ-կոկորդը տեղակայված է համեմատաբար ավելի ցածր

Գ-կոկորդը տեղակայված է համեմատաբար ավելի բարձր

Դ-կոկորդի լուսանցքը համեմատաբար ավելի նեղ է

23. Կոկորդի և ըմպանի շարժողական կարգավորման համար պատասխանատու նյարդային կենտրոնները տեղակայված են գլխուղեղի ___

Ա-լայնական քունքային գալարում

Բ-վերին ճակատային գալարներում

Գ-ծոծրակագագաթային ակոսում

Դ-հետին գագաթային գալարներում

24. Քթի շարժողական նյարդավորումն իրականացվում է.

Ա-թափառող նյարդով

Բ-եռորյակ նյարդի I ճյուղով

Գ-դիմային նյարդով

Դ-եռորյակ նյարդի II ճյուղով

25. Ըմպանի պատերը կազմում են հետևյալ շերտերը.

Ա-շարակցահյուսվածքային, մկանային, ենթալորձային և լորձային

Բ-շարակցահյուսվածքային, մկանային, ենթալորձային և լիմֆոիդ

Գ-ոսկրային, մկանային, ենթալորձային և լորձային

Դ-մկանային, լիմֆոիդ և լորձային

26. Իսկական բնածին ստրիդորի առավել հաճախ պատճառ է համարվում.

Ա-կոկորդի աճառային կմախքի բնածին թուլությունը

Բ-ձայնաճեղքի շրջանի ճգանները և կպումները

Գ-ձայնային ծալքերի պարեզը

Դ-կոկորդի ստենոզը

27. Կոխլեար իմպլանտացիայի վիրահատության ցուցում է համարվում.

Ա-3-րդ աստիճանի խառը ծանրալսությունը

Բ-կեղևային խլությունը

Գ-կոնդուկտիվ ծանրալսությունը

Դ-4-րդ աստիճանի նեյրոսենսոր ծանրալսությունը

28. Լակունար անգինան առաջին հերթին տարբերակում են.

Ա-տուբերկուլոզից

Բ-սնկային անգինայից

Գ-դիֆթերիայից

Դ-սուր ֆարինգիտից

29. «Ագրանուլոցիտար անգինա» ախտորոշումը հաստատում են հետևյալ հետազոտությունից հետո.

Ա-ցիտոլոգիական

Բ-բակտերիոլոգիական

Գ-արյան

Դ-մեզի

30. Կոկորդի քաղցկեղի բնորոշ լարինգոսկոպիկ պատկերն է.

Ա-լայն հիմքով նորագոյացությունը՝ խոցոտման նշաններով

Բ-հարթ մակերեսով նորագոյացությունը

Գ-բարակ հիմքով կլորավուն գոյացությունը

Դ-կոկորդի լորձաթաղանթի ապակենման այտուցը

31. Կոկորդի սուր ենթաձայնածալքային այտուցի դեղորայքային վերացման համար օգտագործում են.

Ա-դեկոնգեստանտներ

Բ-սպազմոլիտիկներ

Գ-ստերոիդային հորմոններ

Դ-հիպոտենզիվ միջոցներ

32. Թմբկաթաղանթի թափածակման առկայության դեպքում միջին ականջի բորբոքային պրոցեսը վերացնելու համար կիրառվող կաթիլները պարունակում են.

Ա-ջրածնի պերօքսիդ

Բ-հակաբիոտիկներ

Գ-հիպերտոնիկ աղային լուծույթ

Դ-բորաթթվային սպիրտ

33. Քթի խոռոչը գանգի առաջային փոսից անջատվում է

Ա-ծակոտկեն թիթեղով

Բ-ուղղահայաց թիթեղով

Գ-թղթե թիթեղով

Դ-խոփով

34. Ըստ վնասող գործոնի բնույթի՝ ըմպանի այրվածքները լինում են.

Ա-ֆիզիկական, կենսաբանական

Բ-գազային, էլեկտրական

Գ-քիմիական, ջերմային

Դ-գալվանական, արևային

35. Լսողության շեմերի իջեցումը մինչև 55 դԲ համապատասխանում է _____ աստիճանի ծանրալսության:

Ա-1

Բ-2

Գ-4

Դ-3

36. Մատանիաձև և վահանաձև աճառները միմյանց միանում են _____ կապանի միջոցով:

Ա-թեք

Բ-էլիպսաձև

Գ-կոնաձև

Դ-շերեփամակկոկորդային

37. Թմբկախոռոչի միջային պատին՝ ձվաձև պատուհանից վեր, տեղակայված է.

Ա-հորիզոնական կիսաշրջանաձև խողովակի ամպուլան

Բ-կլոր պատուհանը

Գ-դիմային նյարդի խողովակը

Դ-պրոմոնտորիումը

38. Կերակրափողի այրվածքի ամենահաճախ հանդիպող բարդությունն է.

Ա-կերակրափողի սպիական ստենոզը

Բ-լուծը

Գ-կայուն անեմիան

Դ-ֆանտոմային ցավերը

39. Առածգական աճառից է կազմված կոկորդի _____ աճառը:

Ա-մակկոկորդային

Բ-մատանիաձև

Գ-վահանաձև

Դ-շերեփաձև

40. Քթի ստորին խեցին իրենից ներկայացնում է.

Ա-վերին ծնոտի ոսկրի մի մասը

Բ-լորձաթաղանթ

Գ-մաղոսկրի մի մասը

Դ-առանձին ոսկոր

41. Քթի միջնապատի մաշկաաճառային մասն անվանում են

Ա-գլաբելա

Բ-քթի նախադուռ

Գ-փական

Դ-կոլումելա

42. Ծանրալսության աստիճանների միջազգային դասակարգման համաձայն՝ I աստիճանի ծանրալսությունը համապատասխանում է լսողության խանգարմանը հետևյալ միջակայքում (դԲ-ով).

Ա-0-25

Բ-26-40

Գ-56-70

Դ-41-55

43. Էպիգլոտիտով հիվանդների գանգատներին են դասվում.

Ա-տարբեր ծանրության աստիճանի դիսֆագիան և կոկորդի ցավը

Բ-ձայնի արագ հոգնելիությունը և թուլությունը

Գ-խռպոտությունը, կոկորդի քերոցը

Դ-հազը, կոկորդի չորությունը

44. Ռետրոկոխլեար ախտաբանությանն է դասվում.

Ա-օտոսկլերոզը

Բ-ակուստիկ նևրինոման

Գ-ծայրամասային սենսոնևրալ ծանրալսությունը

Դ-Մենիերի հիվանդությունը

45. Ձայնային տատանումները թմբկաթաղանթից ասպանդակի հիմքի թիթեղին փոխանցվելիս տեղի է ունենում.

Ա-ամպլիտուդի մեծացում և ուժի մեծացում

Բ-ուժի նվազում և ամպլիտուդի մեծացում

Գ-ամպլիտուդի նվազում և ուժի մեծացում

Դ-ամպլիտուդի նվազում և ուժի նվազում

46. Կոկորդի ստենոզին բնորոշ է.

Ա-դիսֆագիան

Բ-էքսպիրատոր հևոցը

Գ-ինսպիրատոր հևոցը

Դ-խռպոտությունը

47. Սամտերի (ասպիրինային) եռյակին են դասվում ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի անտանելիությունը, բրոնխային ասթման և

Ա-պոլիպոզ ռինոսինուսիտը

Բ-ալերգիկ ռինիտը

Գ-էկզոֆթալմը

Դ-սինուսիտը

48. Սինուսիտների բարդություններին առավել հաճախ դասվում են.

Ա-վազոմոտոր ռինիտը

Բ-քթային արյունահոսությունները

Գ-ակնակապճային և ներգանգային բարդությունները

Դ-լիկվորեան

49. Կեղծ կրուպի կլինիկական պատկերը բնութագրվում է.

Ա-խռպոտ ձայնով և հազի բացակայությամբ

Բ-մաքուր ձայնով և հաչոցանման հազով

Գ-խառը բնույթի հևոցով

Դ-նոպայածև ստենոզներով

50. Կոկորդի պապիլոմաներն առավել հաճախ տեղակայվում են.

Ա-ձայնային ծալքերի միջին երրորդականում

Բ-ենթաձայնային տարածությունում

Գ-հետին կոմիսուրայի շրջանում

Դ-առաջային կոմիսուրայի շրջանում

51. Տոնզիլէկտոմիայի ցուցում է.

Ա-ադենոիդիտը

Բ-քրոնիկ ֆարինգիտը

Գ-պարատոնզիլյար թարախակույտը

Դ-խոցանեկրոտիկ անգինան

52. Պոլիպոզ ռինոսինուսիտը հաճախ ուղեկցում է և ախտածնական կապ ունի.

Ա-Կրոնի հիվանդության հետ

Բ-քրոնիկ գաստրիտի հետ

Գ-սրտի իշեմիկ հիվանդության հետ

Դ-բրոնխային ասթմայի հետ

53. Ըմպանի բարորակ ուռուցքի բնորոշ նշաններին են դասվում.

Ա-առատ արյունահոսությունները

Բ-շնչառության կայծակնային դժվարացումը և բրոնխոսպազմը

Գ-ռեգիոնար ավշային հանգույցների սրընթաց մեծացումը

Դ-դանդաղ աճը և ռեգիոնար ավշային հանգույցների կողմից ռեակցիայի բացակայությունը

54. Կատարալ անգինան բնութագրվում է ֆարինգոսկոպիկ փոփոխություններով՝ քմային նշիկների _____ տեսքով:

Ա-լակունաներում սպիտակ կամ բաց դեղին փառերի

Բ-մակերեսին թարախակալված ֆոլիկուլների

Գ-լակունաների լայնացման

Դ-և քմային աղեղների հիպերեմիայի

55. Օզենայի ախտանիշին բնորոշ է.

Ա-պարոքսիզմալ փռշտոցը

Բ-գարշահոտ հարբուխը

Գ-քթի ընդհատվող խցանվածությունը

Դ-կակոսմիան

56. Ըմպանի օտար մարմինների դեպքում նշվում է ____ բնույթի ցավ:

Ա-կտրող

Բ-ծակող

Գ-աճող

Դ-բութ, տանջող

57. Ֆոնացիայի ժամանակ ձայնաճեղքի ոչ լիարժեք փակումը, ձայնային ծալքերի ձգվածության թուլացումը, ֆոնացիոն արտաշնչման տևողության և ենթաձայնաճալքային ճնշման նվազումը սուր վիրուսային լարինգիտից հետո համապատասխանում են.

Ա-քրոնիկ լարինգիտին

Բ-աֆոնիային

Գ-հիպերտոնուսային դիսֆոնիային

Դ-հիպոտոնուսային դիսֆոնիային

58. Մեծահասակների մոտ կոկորդը տեղակայված է _____ պարանոցային ողերի մակարդակին:

Ա-II-V

Բ-IV-VI

Գ-I-IV

Դ-III-VI

59. Կոկորդի տուբերկուլոզին բնորոշ է.

Ա-ինֆիլտրատը և խոցոտումները մեկ ձայնային ծալքի վրա

Բ-լորձաթաղանթի դիֆուզ կատարալ բորբոքումը

Գ-ենթաձայնածալքային այտուցը

Դ-ձայնային ծալքերի համաչափ ախտահարումը

60. Կոկորդի միակողմանի կաթվածի դեպքում հիմնական գանգատն է.

Ա-դիսֆագիան

Բ-դիսպնոէն

Գ-դիսֆոնիան

Դ-կոկորդի հիպերէսթեզիան

61. Կոկորդի տուբերկուլոզին բնորոշ է.

Ա-ինֆիլտրատը և խոցոտումները մեկ ձայնային ծալքի վրա

Բ-լորձաթաղանթի դիֆուզ կատարալ բորբոքումը

Գ-ենթաձայնածալքային այտուցը

Դ-ձայնային ծալքերի համաչափ ախտահարումը

62. Արտաքին օտիտները դասակարգվում են որպես.

Ա-ատրոֆիկ և հիպերտրոֆիկ

Բ-գրանուլյոզ և խոցային

Գ-կատարալ և էքսուդատիվ

Դ-սահմանափակ և դիֆուզ

63. Միջին և ներքին ականջի բնածին անոմալիաները հայտնաբերելու համար ցուցված է անցկացնել.

Ա-քունքոսկրերի ՀՏ

Բ-գանգի ռենտգենոգրաֆիա

Գ-քունքոսկրերի ռենտգենոգրաֆիա թեք և առանցքային պրոյեկցիաներով

Դ-քունքոսկրերի գծային տոմոգրաֆիա

64. Կոկորդի միակողմանի կաթվածի դեպքում հիմնական գանգատն է.

Ա-դիսֆագիան

Բ-դիսպնոէն

Գ-դիսֆոնիան

Դ-կոկորդի հիպերէսթեզիան

65. Մաստոիդիտի ախտորոշման հիմնական մեթոդն է.

Ա-ռենտգենաբանականը

Բ-օտոսկոպիան

Գ-իմպեդանսոմետրիան

Դ-աուդիոգրաֆիան

66. Վազոմոտոր ռինիտի էթիոլոգիայի հիմքում ընկած է.

Ա-նյարդամկանային փոխանցման տոնուսի գերակշռումը 2-6 պարանոցային ողերի մակարդակին

Բ-նյարդային հանգույցների դիսֆունկցիան ամոնյան եղջյուրի շրջանում

Գ-վեգետատիվ նյարդային համակարգի դիսֆունկցիան

Դ-էնդոկրին և պարակրին իմունային համակարգերի ֆունկցիաների միջև անհավասարակշռությունը

67. Կոկորդի սիֆիլիսի դեպքում առաջատար գանգատն է.

Ա-դիսֆագիան

Բ-խռպոտությունը

Գ-հևոցը

Դ-հազը

68. Քարանձավային սինուսի թրոմբոֆլեբիտ կարող է առաջանալ.

Ա-ռինոլիթի դեպքում

Բ-ալերգիկ ռինիտի դեպքում

Գ-քթաշրթունքային եռանկյան ֆուրունկուլի դեպքում

Դ-քթի միջնապատի ծռման դեպքում

69. Կոկորդի կենտ աճառներին է պատկանում

Ա-եղջյուրաձևը

Բ-սեպաձևը

Գ-շերեփաձևը

Դ-վահանաձևը

70. Քաղցկեղի դասակարգման մեջ T0 նշանը նշանակում է, որ ուռուցքը

Ա-սահմանափակված է օրգանի մեկ անատոմիական մասով

Բ-սահմանափակված է օրգանի պատերով

Գ-որպես առաջնային չի հայտնաբերվել

Դ-սահմանափակված է օրգանի մեկ անատոմիական գոտիով

71. Մակկոկորդի և փորոքային ծալքերի առաջային մասի ուռուցքի դեպքում կատարում են.

Ա-տրախեոստոմիա

Բ-ֆրոնտալ առաջային լարինգէկտոմիա

Գ-կրիկոհիոհիդոպեքսիա

Դ-վերձայնածալքային լարինգէկտոմիա

72. Կոկորդի ռեցիդիվող պապիլոմատոզն առավել հաճախ դիտվում է.

Ա-դեռահասների մոտ

Բ-տարեց անձանց մոտ

Գ-միջին տարիքի հիվանդների մոտ

Դ-երեխաների մոտ

73. Մարդու մոտ Բերկիտի լիմֆոմայի և քթըմպանի քաղցկեղի առաջացման հետ առնչություն ունի.

Ա-ադենովիրուսը

Բ-մարդու պապիլոմավիրուսը

Գ-Էպշտեյն-Բարի վիրուսը

Դ-գրիպի վիրուսը

74. Սուբդուրալ թարախակույտի դեպքում միջին ականջից ինֆեկցիայի տարածման առավել հավանական ուղին է.

Ա-կոնտակտայինը

Բ-հեմատոգենը

Գ-ռինոտուբարը

Դ-լիմֆոգենը

75. Ամբուլատոր պրակտիկայում սուր թարախային միջին օտիտի դեպքում նշանակվող առաջին գծի հակաբիոտիկն է.

Ա-ամոքսիցիլինը

Բ-ազիթրոմիցինը

Գ-լևոֆլոքսացինը

Դ-ցեֆտրիաքսոնը

76. Ձայնային ծալքերի փափուկ հանգույցիկների լարինգոսկոպիկ դրսևորումն է ձայնային ծալքերի _____

Ա-առաջային և միջին երրորդականների սահմանին լորձաթաղանթի այտուցի առկայությունը

Բ-հետին երրորդականում լորձաթաղանթի այտուցի առկայությունը

Գ-առաջային երրորդականում լորձաթաղանթի այտուցի առկայությունը

Դ-երկուսի գծային տատանողական եզրը

77. Մեծահասակի շնչափողի երկարությունը միջինում տատանվում է ___-ից մինչև ___ սմ:

Ա-5; 6

Բ-2; 4

Գ-12; 13

Դ-9; 11

78. Բանալ անգիններին են դասվում _____, ֆոլիկուլյար, լակունար և խառը անգինաները.

Ա-կատարալ

Բ-հերպետիկ

Գ-քութեշային

Դ-ագրանուլոցիտար

79. Կոկորդի նախաքաղցկեղային հիվանդություն է.

Ա-տուբերկուլոզը

Բ-անգիոման

Գ-ձայնային ծալքի ֆիբրոման

Դ-պապիլոմատոզը

80. Նեյրոսենսոր ծանրալսությունն անհրաժեշտ է տարբերակել.

Ա-օտոսկլերոզից և Մենիերի հիվանդությունից

Բ-քրոնիկ էպիտիմպանիտներից և մեզոտիմպանիտներից

Գ-տիմպանոսկլերոզից

Դ-ադհեզիվ օտիտից

81. Թմբկախոռոչն ունի _____ պատ:

Ա-4

Բ-3

Գ-5

Դ-6

82. Կոկորդի երկկողմանի կաթվածի դեպքում դեկոմպենսացիայի փուլում ցուցված է .

Ա-կոնիկոտոմիա

Բ-հորմոնային թերապիա

Գ-ինտուբացիա

Դ-տրախեոտոմիա

83. Կոկորդի վեստիբուլյար բաժնի քաղցկեղի առավել վաղ ախտանիշներին են դասում.

Ա-ձայնի խանգարումը

Բ-կոկորդում ցավերը

Գ-կլման դժվարացումը

Դ-շնչառության խանգարումը

84. Սուր դիֆուզ արտաքին օտիտով հիվանդի մոտ օտոսկոպիայի ժամանակ նկատվում է.

Ա-ֆուրունկուլի նման գոյացություն

Բ-թմբկաթաղանթի թափածակում

Գ-թարախային արտադրություն արտաքին լսողական անցքում

Դ-լայն արտաքին լսողական անցք

85. Վեստիբուլյար ֆունկցիայի հանկարծակի երկարատև անկումն առանց լսողության իջեցման վկայում է.

Ա-Մենիերի հիվանդության մասին

Բ-վեստիբուլյար նեյրոնիտի մասին

Գ-ակուստիկ շվանոմայի մասին

Դ-շճային լաբիրինթիտի մասին

86. Որո՞նք են OSA-ի (օբստրուկտիվ քնի ապնոէի) հիմնական գանգատներից/ախտանիշներից:

Ա-Միայն բարձր խռմփոցը և գլխացավը

Բ-Բարձր խռմփոց, ցերեկային արտահայտված քնկոտություն, հոգնածություն, կենտրոնացման կորուստ և մտավոր կատարողականության նվազում

Գ-Միայն հիշողության կորուստ և տեսողության վատացում

Դ-Միայն գիշերային քրտնարտադրություն և ախորժակի նվազում

87. Ո՞ր աճառներից է կազմված քթի աճառային բաժինը (cartilaginous part of the nose):

Ա-Վերին կողմնային, թևակերպ, միջնապատի աճառից և հավելյալ աճառներից

Բ-Միայն վերին և ստորին լատերալ աճառներից

Գ-Վերին կողմնային, թևակերպ և հավելյալ

Դ-Քթոսկրից, վերին լատերալ և միջնապատի աճառներից

88. Ո՞ր հատվածներն են կազմում քթի խոռոչի հոտառական բաժինը

Ա-Քթի խոռոչի ստորին երկու երրորդը, հատակը և միջնապատի հանդիպակաց հատվածը

Բ-Կողմնային պատի վերին մեկ երրորդը՝ վերին խեցին, միջին խեցու վերին հատվածը, քթի միջնապատի համապատասխան հատվածը և քթի խոռոչի տանիքը

Գ-Միայն քթի խոռոչի տանիքը

Դ-Կողմնային պատի ստորին մեկ երրորդը և միջին խեցին

89. Որո՞նք են OSA-ի (օբստրուկտիվ քնի ապնոէի) հնարավոր հետևանքները, հատկապես հիվանդության առաջադեմ փուլերում:

Ա-Սրտանոթային ռիսկի բարձրացում, զարկերակային բարձր ճնշում, քաշի ավելացում և դժբախտ պատահարների մեջ ներգրավվելու բարձր ռիսկ

Բ-Միայն ախորժակի նվազում և տեսողության վատացում

Գ-Միայն մկանային ցավեր և մարմնի ջերմաստիճանի բարձրացում

Դ-Սրտի հիվանդությունների և արյան ճնշման ռիսկի նվազում

90. Ի՞նչ է քնի օբստրուկտիվ ապնոէ համախտանիշը (OSA):

Ա-Քնի խանգարում, որի դեպքում քնի ընթացքում վերին շնչուղիների կրկնվող մասնակի կամ ամբողջական փակման հետևանքով շնչառությունը ժամանակավորապես դադարում կամ զգալիորեն նվազում է:

Բ-Հիվանդություն, որի դեպքում մարդը միայն ցերեկային ժամերին է ունենում շնչառության դժվարություն:

Գ-Քնի խանգարում, որն առաջանում է միայն սթրեսի և հոգնածության հետևանքով:

Դ-Հիվանդություն, որի հիմնական ախտանիշը քնի ընթացքում մարմնի ջերմաստիճանի բարձրացումն է:

91. Որո՞նք են քնի օբստրուկտիվ ապնոէ համախտանիշի (OSA) առաջացման հիմնական պատճառներն ու նախատրամադրող գործոնները:

Ա-Ավելորդ քաշը/ճարպակալումը, վերին շնչուղիների անատոմիական առանձնահատկությունները, մեծացած նշագեղձերը, տարիքը և ալկոհոլի կամ հանգստացնող դեղերի օգտագործումը:

Բ-Միայն բարձր զարկերակային ճնշումը և գլխացավերը:

Գ-Միայն ֆիզիկական ակտիվության պակասը և օրվա ընթացքում երկար քնելը:

Դ-Միայն վարակիչ հիվանդությունները և մարմնի բարձր ջերմաստիճանը:

92. Ո՞ր զարկերակներն են մասնակցում քթի միջնապատի (nasal septum) արյունամատակարարմանը:

Ա-Միայն anterior և posterior ethmoidal arteries

Բ-Միայն sphenopalatine artery և greater palatine artery

Գ-Anterior և posterior ethmoidal, sphenopalatine, greater palatine և superior labial arteries

Դ-Միայն facial և ophthalmic arteries

93. Քրոնիկ հիպերպլաստիկ լարինգիտի առաջացման հիմնական պատճառն է.

Ա-էնդոկրին համակարգի ախտաբանությունը

Բ-ձայնային ծալքերի ակուստիկ վնասվածքը

Գ-մարսողական տրակտի ախտաբանությունը

Դ-նյարդային համակարգի ախտաբանությունը

94. Քթի ոսկրերի անհապաղ ռեպոզիցիայի հակացուցում է.

Ա-քթի ոսկրերի բաց կոտրվածքը

Բ-II-III աստիճանի շոկը, քթից պրոֆուզ արյունահոսությունը, ուղեղի ծանր ցնցումը

Գ-քթի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքը

Դ-կոտրվածքի շրջանում ուժեղ ցավը

95. Քրոնիկ թարախային միջին օտիտի նշաններին է պատկանում.

Ա-թմբկաթաղանթի կայուն թափածակումը

Բ-թմբկաթաղանթի վրա բազմաթիվ բշտիկները

Գ-համակենտրոն նեղացած արտաքին լսողական անցքը

Դ-ականջից կաթնաշոռանման արտադրությունը

96. Թմբկաթաղանթի կայուն չոր թափածակման դեպքում բուժումը կարող է ներառել

Ա-պարացենտեզ

Բ-տիմպանոպլաստիկա

Գ-տիմպանոստոմիա

Դ-անտրոտոմիա

97. Կոկորդի երկկողմանի կաթվածի առաջացման հիմնական պատճառը հետևյալ նյարդի վնասումն է՝

Ա-հետադարձ

Բ-լեզվաըմպանային

Գ-հավելյալ

Դ-եռորյակ

98. Քրոնիկ թարախային էպիտիմպանիտի ժամանակ զարգանում է _____ նյարդի կաթված

Ա-թափառող

Բ-լեզվաըմպանային

Գ-դիմային

Դ-լսողական

99. Նշիկների վրա առաջացող փառը նշիկների սահմաններից դուրս է տարածվում

Ա-լակունար անգինայի ժամանակ

Բ-դիֆթերիայի ժամանակ

Գ-խոցաթաղանթային անգինայի ժամանակ

Դ-ֆոլիկուլյար անգինայի ժամանակ

100. Շտապ հոսպիտալացում անհրաժեշտ է լեզվային նշիկի բորբոքման _____ ձևի դեպքում

Ա-կատարային

Բ-ֆլեգմոնոզ

Գ-լակունար

Դ-ֆոլիկուլյար

101. Քթի խոռոչի բարորակ ուռուցքների բուժման մեթոդ է.

Ա-ֆիզիոթերապևտիկը

Բ-ճառագայթայինը

Գ-քիմիաթերապևտիկը

Դ-վիրաբուժականը

102. Ստապեդոպլաստիկան կատարվում է.

Ա-օտոսկլերոզի դեպքում

Բ-քրոնիկ թարախային միջին օտիտի դեպքում

Գ-էքսուդատիվ օտիտի դեպքում

Դ-սուր թարախային միջին օտիտի դեպքում

103. Էքստրադուրալ թարախակույտերն ավելի հաճախ առաջանում են.

Ա-սեկրետոր միջին օտիտի դեպքում

Բ-սուր կատարալ օտիտի դեպքում

Գ-քրոնիկ թարախային միջին օտիտի սրացման դեպքում

Դ-արտաքին օտիտի դեպքում

104. Քթի խոնդրոմայի առավել բնորոշ տեղակայումն է.

Ա-քթի ստորին խեցին և քթի խոռոչի հատակը

Բ-քթի միջնապատը և քթի թևերը

Գ-քթի խոռոչի առաստաղը և քթի վերին խեցին

Դ-քթի միջին խեցին և միջին քթանցքը

105. Կոկորդը ենթալեզվային ոսկրի հետ միանում է.

Ա-կոկորդի առաձգական կոնի միջոցով

Բ-մակկոկորդ-ենթալեզվային կապանի միջոցով

Գ-բերանի խոռոչի հատակի թաղանթի միջոցով

Դ-վահան-ենթալեզվային թաղանթի միջոցով

106. Սուր բակտերիալ ռինոսինուսիտով հիվանդի ամբուլատոր բուժման սկզբնական փուլն է.

Ա-ախտահարված սինուսի վրա էնդոսկոպիկ վիրահատության կատարումը

Բ-ֆիզիոթերապիայի, ասեղնաոռեֆլեքսաթերապիայի և մերսման անցկացումը

Գ-հակաբիոտիկների ներքին ընդունման, աղային լուծույթների կամ դեկոնգեստանտների քթի մեջ կիրառման նշանակումը

Դ-վերին ծնոտային խոռոչների պունկցիայի կատարումը՝ քթի մեջ հորմոնալ դեղամիջոցների և հակասեպտիկների ներմուծմամբ

107. Ադհեզիվ միջին օտիտի հիմնական օտոսկոպիկ նշաններն են

Ա-թմբկաթաղանթի ճանաչողական կետերի անհստակությունը և անոթների ինյեկցիան

Բ-հեմոռագիկ բշտերը և թմբկաթաղանթի գերշարժունությունը

Գ-թմբկաթաղանթի թափածակումը և լորձաթարախային արտադրությունը

Դ-թմբկաթաղանթի սպիական փոփոխությունները և անշարժությունը

108. Քթի հետին տամպոնադան կիրառվում է

Ա-հարքթային խոռոչներ և արցունքային խողովակ արյան թափանցումը կանխելու համար

Բ-քթի և հարքթային խոռոչների լորձաթաղանթի ատրոֆիկ պրոցեսների զարգացումը կանխելու համար

Գ-քթի հետին բաժիններից արյունահոսությունը դադարեցնելու համար՝ առատ արյունահոսությունների դեպքում

Դ-հետվիրահատական շրջանում հարքթային խոռոչներից քթի խոռոչ թարախային էքսուդատի արտահոսքը կանխելու համար

109. Քրոնիկ տոնզիլիտի ֆարինգոսկոպիկ նշաններն են քմային աղեղների եզրերի հիպերեմիան, նշիկների և քմային աղեղների միջև սպիական կպումները, փուխր կամ սպիական փոփոխված նշիկները, նշիկների լակունաներում կազեոզ-թարախային խցանները կամ հեղուկ թարախը և

Ա-քմային նշիկների կտրուկ մեծացումը

Բ-քմային նշիկների վրա խոցանեկրոտիկ փառը

Գ-նշիկների վրա փառը

Դ-ռեգիոնար լիմֆադենիտը

110. Կոկորդի ախտաբանության կասկածի դեպքում հետազոտության հիմնական գործիքային մեթոդն է.

Ա-էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիան

Բ-լարինգոսկոպիան

Գ-պարանոցի օրգանների ուլտրաձայնային հետազոտությունը

Դ-մեզոֆարինգոսկոպիան

111. Դիֆթերիայով և կոկորդի III աստիճանի ստենոզով հիվանդներին ցուցված է.

Ա-կոկորդից ֆիբրինոզ փառի հեռացումը

Բ-տրախեոտոմիան

Գ-հակաբիոտիկոթերապիա

Դ-հիմնային-յուղային ինհալացիաները

112. Պարատոնզիլյար թարախակույտի առավել հաճախ զարգացող տեսակն է.

Ա-կողմնայինը

Բ-հետինը

Գ-առաջաստորինը

Դ-առաջավերինը

113. Օտոսկլերոզի դեպքում առավել տարածված վիրահատությունն է.

Ա-տիմպանոպլաստիկան

Բ-ստապեդոպլաստիկան

Գ-ասպանդակի մոբիլիզացիան

Դ-լաբիրինթի ֆենեստրացիան

114. Լակունար անգինան պետք է տարբերակել.

Ա-պարատոնզիլյար թարախակույտից

Բ-սուր ֆարինգիտից

Գ-ֆարինգոմիկոզից

Դ-դիֆթերիայից

115. Կոնիկոտոմիայի ժամանակ կատարվող կտրվածքն է

Ա-հորիզոնականը

Բ-խաչաձևը

Գ-ուղղահայացը

Դ-ճառագայթայինը

116. Կոկորդի սուր ստենոզների դեպքում հանգստի վիճակում ինսպիրատոր հևոցն ի հայտ է գալիս.

Ա-դեկոմպենսացիայի փուլում

Բ-սուբկոմպենսացիայի փուլում

Գ-կոմպենսացիայի փուլում

Դ-ասֆիքսիայի փուլում

117. Ըմպանը տեղակայված է.

Ա-II և IV պարանոցային ողերի միջև

Բ-I և II պարանոցային ողերի միջև

Գ-գանգի հիմքի և II պարանոցային ողի միջև

Դ-գանգի հիմքի և կերակրափողի մուտքի միջև

118. Ըմպանի կողմնային տարածությունը հաղորդակցվում է.

Ա-կոկորդի խոռոչի հետ

Բ-հետին միջնորմի հետ

Գ-առաջային միջնորմի հետ

Դ-հարկերակրափողային տարածության հետ

119. Սֆենոիդիտին բնորոշ է գլխացավ, որը.

Ա-ծոծրակային, ռետրոօրբիտալ

Բ-դիֆուզ է՝ առանց հստակ տեղակայման

Գ-տեղակայված է ճակատի շրջանում

Դ-առաջանում է երեկոյան՝ հորիզոնական դիրքում

120. Օրոանտրալ ֆիստուլան առավել հաճախ առաջանում է.

Ա-երկրորդ պրեմոլյարի հեռացումից հետո

Բ-երկրորդ մոլյարի հեռացումից հետո

Գ-առաջին պրեմոլյարի հեռացումից հետո

Դ-առաջին մոլյարի հեռացումից հետո

121. Պրելինգվալ խլությամբ երեխաների կոխլեար իմպլանտացիայի համար առավել նախընտրելի տարիքն է.

Ա-կյանքի առաջին տարին

Բ-3-6 տարեկանը

Գ-7-10 տարեկանը

Դ-10 տարեկանից բարձրը

122. Ականջախեցու ագենեզիան նշանակում է.

Ա-ականջախեցու կտրուկ մեծացում

Բ-հակագալարի բացակայություն

Գ-ականջախեցու չափի զգալի փոքրացում

Դ-ականջախեցու լրիվ բացակայություն

123. Քթային արյունահոսության առավել հաճախ հանդիպող տեղակայումն է

Ա-քթի միջնապատի առաջային բաժինը

Բ-քթի միջին խեցու առաջային ծայրը

Գ-քթի ստորին խեցու առաջային ծայրը

Դ-քթի ստորին խեցու հետին ծայրը

124. Քթի ոսկրերի կոտրվածքի առավել հավաստի ախտանիշն է.

Ա-քթային արյունահոսությունը

Բ-քթային շնչառության դժվարացումը

Գ-քթի ոսկրերի ախտաբանական շարժունությունը

Դ-շոշափման ժամանակ ցավը

125. Ականջախեցու պերիխոնդրիտին, ի տարբերություն կարմիր քամու, բնորոշ է.

Ա-հստակ սահմաններով հիպերեմիայի և ուռածության առկայությունը

Բ-ականջախեցու բլթակի չներգրավվելը բորբոքային պրոցեսում

Գ-բորբոքված մաշկի վրա շիճուկային պարունակությամբ բշտիկների առաջացումը

Դ-բորբոքման տարածումը բլթակի վրա և հետականջային շրջան

126. Ըմպանի դիֆթերիայի կլինիկական պատկերը բնութագրվում է.

Ա-նշիկների վրա թաղանթով և արտահայտված ինտոքսիկացիայի նշաններով

Բ-բերանի խոռոչի հատակի բորբոքմամբ՝ արտահայտված ինֆիլտրացիայով

Գ-պարանոցի, շրթունքների, ենթածնոտային շրջանի և կոկորդի հանկարծակի առաջացած այտուցով

Դ-մեկ նշիկի վրա խոցերով

127. Քրոնիկ էպիտիմպանիտը բնութագրվում է.

Ա-թմբկաթաղանթի թուլացած մասի եզրային թափածակմամբ

Բ-կենտրոնական թափածակմամբ

Գ-առաջային ստորին քառանկյան թափածակումներով

Դ-հետին ստորին քառանկյան թափածակումներով

128. Տուբերկուլոզով առավել հաճախ ախտահարվում է.

Ա-քթըմպանը

Բ-կոկորդը

Գ-բերանըմպանը

Դ-ներքին ականջը

129. Տիմպանալ գլոմուսային ուռուցքին բնորոշ է.

Ա-թափառող նյարդի պարեզը

Բ-ականջում զնգոցը

Գ-պուլսացնող բնույթի ականջի աղմուկը

Դ-ականջում «հեղուկի տեղափոխման զգացողության» նշանը

130. Կոկորդի քրոնիկ սպեցիֆիկ գրանուլեմաներին է պատկանում.

Ա-Ռեյնկե–Հայեկի հիվանդությունը

Բ-հետինտուբացիոն գրանուլեման

Գ-սկլերոման

Դ-կոնտակտային գրանուլեման

131. Կոկորդի թարախակույտի առաջացման առավել հաճախ հանդիպող տեղն է.

Ա-շերեփաձև աճառը

Բ-մակկոկորդը

Գ-կոկորդի փորոքը

Դ-ձայնային ծալքը

132. Քրոնիկ տոնզիլիտի դեպքում քմային աղեղների եզրերի լճացումային գլանաձև հաստացումը բնութագրվում է որպես

Ա-Զակի նշան

Բ-Գիզեի նշան

Գ-Պրեոբրաժենսկու նշան

Դ-Բոխոնի նշան

133. Կոկորդի նոդոզ կամ ուռուցքանման գոյացություններին է պատկանում.

Ա-ձայնային ծալքերի լեյկոպլակիան

Բ-ձայնային ծալքերի հիպերկերատոզը

Գ-միջշերեփաձև տարածության պախիդերմիան

Դ-ձայնային ծալքերի հանգույցիկները

134. Վազոմոտոր ռինիտի պահպանողական բուժման արդյունավետ մեթոդ է.

Ա-տեղային հակասեպտիկների կիրառումը

Բ-էնդոնազալ ուլտրամանուշակագույն ճառագայթահարման կիրառումը

Գ-անոթասեղմիչ կաթիլների կիրառումը

Դ-տեղային (տոպիկ) կորտիկոստերոիդների կիրառումը

135. Սուր կատարալ լարինգիտով հիվանդները գանգատվում են.

Ա-հազից, արյունախխումից

Բ-հևոցից, դիսֆագիայից, առատ խորխից

Գ-կոկորդում քերոցի զգացումից, չորությունից, հազից, խռպոտ ձայնից

Դ-հանգստի վիճակում շնչառության դժվարացումից

136. Ի.Բ. Սոլդատովի դասակարգման մեջ առանձնացնում են _____ քրոնիկ տոնզիլիտ:

Ա-պարզ և տոքսիկ-ալերգիկ

Բ-կոմպենսացված և դեկոմպենսացված

Գ-կատարալ և թարախային

Դ-սուր և քրոնիկ

137. Փռշտոցի նոպաներով և լորձի առատ արտադրությամբ ընթացող ռինիտը կոչվում է.

Ա-ատրոֆիկ

Բ-կատարալ

Գ-թարախային

Դ-վազոմոտոր

138. Նորմային համապատասխանում է տիմպանոգրամի հետևյալ տիպը՝

Ա-C

Բ-B

Գ-A

Դ-D

139. Որպես կանոն, մաստոիդիտն առաջանում է սուր թարախային միջին օտիտի սկզբից _____ հետո:

Ա-1-2 շաբաթ

Բ-1,5-2 ամիս

Գ-3-5 օր

Դ-2 ժամ

140. Պարատոնզիլիտի դեպքում վարակի թափանցման առավել հաճախ հանդիպող ուղին է.

Ա-տոնզիլոգենը

Բ-օտոգենը

Գ-հեմատոգենը

Դ-լիմֆոգենը

141. Կորտիի օրգանը ձայնային անալիզատորի համակարգի.

Ա-կեղևային ծայրն է

Բ-հաղորդող ուղիներն են

Գ-ծայրամասային ընկալիչն է

Դ-ենթակեղևային կենտրոնն է

142. Քթի միջնապատի վիրահատության ժամանակ աճառային և ոսկրային հենքի ամբողջական հեռացման հետևանքն է.

Ա-շնչառության ժամանակ քթի միջնապատի թաղանթի ֆլոտացիան

Բ-ըմպանային նշիկի քրոնիկ բորբոքումը

Գ-հիմնական (սեպոսկրային) խոռոչների քրոնիկ բորբոքումը

Դ-արտաքին քթի մեջքի կուզիկը

143. Կոկորդի I աստիճանի ստենոզի դեպքում ինհալացիաների համար ընտրության դեղամիջոցն է.

Ա-ատրոպին

Բ-բուդեսոնիդը

Գ-հիդրոկորտիզոնը

Դ-պրեդնիզոլոնը

144. Էպիտիմպանիտի դեպքում թմբկաթաղանթի թափածակումը տեղակայված է _____ մասում:

Ա-կենտրոնական

Բ-ձգված

Գ-չձգված (թուլացած)

Դ-ստորին

145. Ըստ Բ.Ս. Պրեոբրաժենսկու՝ առանձնացնում են քմային նշիկների հիպերտրոֆիայի _____ աստիճան:

Ա-2

Բ-3

Գ-5

Դ-4

146. Ձայնի բարձրությունն արտահայտվում է.

Ա-օկտավաներով

Բ-բաժիններով

Գ-դեցիբելներով

Դ-հերցերով

147. Ցվաարդեմակերն առաջարկել է հոտառության _____ տեսությունը:

Ա-քիմիական

Բ-ֆիզիկաքիմիական

Գ-ֆիզիկական

Դ-կենսաբանական

148. Միջին ականջի թարախային բորբոքման դեպքում ավելի հաճախ առաջանում է _____ ծոցի թրոմբոզ:

Ա-քարանձավային

Բ-սիգմայաձև

Գ-ուղիղ

Դ-լայնական

149. Սուր ֆարինգիտի դեպքում առաջանում են գանգատներ կլման ժամանակ այրոցի, չորության, քերոցի զգացումից, ըմպանում օտար մարմնի զգացողությունից, կոկորդի ցավից և

Ա-ականջների ցավից

Բ-թարախային հարբուխից

Գ-սուբֆեբրիլ ջերմությունից

Դ-մարմնի մինչև 40°C ջերմությունից

150. Aspergillus սեռի սնկերով հարուցված սնկային օտիտի տեղային թերապիայի համար առավել արդյունավետ է նշանակել հետևյալ լուծույթների համակցությունը՝

Ա-օկտենիդինի դիհիդրոքլորիդի և ֆենօքսիէթանոլի

Բ-կլոտրիմազոլի և քլորամֆենիկոլի

Գ-քլորնիտրոֆենոլի և նաֆտիֆինի

Դ-բորաթթվի 3% սպիրտային լուծույթի և ֆուկորցինի

151. Առաջային ակտիվ ռինոմանոմետրիան հետազոտության մեթոդ է, որով որոշվում է

Ա-օդային հոսքում թթվածնի խտությունը

Բ-ներքթային կառույցների դիմադրությունը և օդային հոսքը

Գ-քթի խոռոչում ճնշումը

Դ-քթի խոռոչի ծավալը

152. Ֆունկցիոնալ հիպոտոնուսային դիսֆոնիայի կլինիկական դրսևորում է ֆոնացիայի ժամանակ _____

Ա-օվալածև ճեղքի առկայությունը

Բ-նեղ գծային ճեղքի առկայությունը՝ գլխային ռեգիստրում

Գ-վեստիբուլյար ճեղքի առաջացումը

Դ-եռանկյունաձև ճեղքի առկայությունը

153. Քմային նշիկների հիպերտրոֆիայի III աստիճանը բնութագրվում է նշիկներով, որոնք

Ա-մեծացած են 2/3-ով

Բ-հպվում են միմյանց

Գ-տեղակայված են քմային աղեղների հետևում

Դ-դուրս չեն գալիս քմային աղեղների եզրերից

154. Ձայնային ծալքի հիպերկերատոզի կլինիկական դրսևորում է

Ա-ձայնային ծալքերի լորձաթաղանթի հաստացումը և դիֆուզ հիպերեմիան

Բ-ծալքի մակերեսից չբարձրացող սպիտակավուն գույնի հատվածի առկայությունը

Գ-լորձաթաղանթից վեր ցցված, անհարթ մակերեսով, սպիտակ գույնի հատվածի առկայությունը

Դ-միջշերեփաձև տարածությունում անհարթ մակերեսով, մոխրասպիտակ գույնի էպիդերմալ գերաճի առկայությունը

155. Թարախային սֆենոիդիտի դեպքում օպտիմալ վիրաբուժական մուտքն է

Ա-ըստ Դեննկերի

Բ-էնդոսկոպիկը

Գ-ըստ Իվանովի

Դ-ըստ Կոլդուել–Լյուկի

156. Բոլոր հարքթային խոռոչների բորբոքումը կոչվում է

Ա-պոլիսինուսիտ

Բ-պանսինուսիտ

Գ-ռինոսինուսիտ

Դ-հեմիսինուսիտ

157. Քմային նշիկների III աստիճանի հիպերտրոֆիա որոշում են, եթե դրանք

Ա-զբաղեցնում են քիմք-լեզվային աղեղից մինչև միջին գիծ հեռավորության 2/3-ը

Բ-զբաղեցնում են քիմք-լեզվային աղեղից մինչև միջին գիծ հեռավորության 3/4-ը

Գ-զբաղեցնում են քիմք-լեզվային աղեղից մինչև միջին գիծ հեռավորության 1/2-ը

Դ-հպվում են միմյանց

158. Կոկորդի ռեսպիրատոր պապիլոմատոզի զարգացման էթիոլոգիական գործոնն առավել հաճախ է

Ա-ցիտոմեգալովիրուսը

Բ-Էպշտեյն–Բարի վիրուսը

Գ-մարդու պապիլոմավիրուսի 16 և 18 տիպերը

Դ-մարդու պապիլոմավիրուսի 6 և 11 տիպերը

159. Պարբերական գլխապտույտը լսողության իջեցմամբ, ականջի աղմուկով և լաբիրինթային նիստագմով բնորոշ է.

Ա-Մենիերի հիվանդությանը

Բ-օտոսկլերոզին

Գ-լաբիրինթիտին

Դ-նեյրոսենսոր ծանրալսությանը

160. Գայլախտի դեպքում կոկորդում ախտաբանական պրոցեսն առավել հաճախ տեղակայվում է.

Ա-փորոքային ծալքերի շրջանում

Բ-ձայնային ծալքերի շրջանում

Գ-մակկոկորդի վրա

Դ-ենթաձայնածալքային բաժնում

161. Քրոնիկ թարախային միջին օտիտի և մենինգիտի դեպքում կատարում են.

Ա-տիմպանոպլաստիկա

Բ-CWU կամ CWD մաստոիդեկտոմիա

Գ-պարացենտեզ

Դ-օսիկուլոպլաստիկա

162. Կոկորդի կենտ աճառներին է պատկանում.

Ա-շերեփաձևը

Բ-վահանաձևը

Գ-սեպաձևը

Դ-եղջյուրաձևը

163. Միջին ականջի գլոմուսային ուռուցքի ախտանիշ է.

Ա-թմբկաթաղանթի վրա արյունալի բուշտը

Բ-թմբկաթաղանթի հետևում կարմիր պուլսացնող գոյացությունը

Գ-հիվանդ ականջում բարձր հաճախականության մշտական աղմուկը

Դ-արտաքին լսողական անցքում հաճախ առաջացող հեմոռագիկ կեղևը

164. Մուկոցիլիար տրանսպորտը վերին ծնոտային խոռոչում ուղղված է.

Ա-դեպի ստորին քթանցք

Բ-դեպի բնական բերանակցումը միջին քթանցքում

Գ-շրջանաձև՝ խոռոչի պատերով

Դ-դեպի նախադուռ

165. Մաստոիդիտի ախտորոշման ժամանակ առավել տեղեկատվական հետազոտությունն է

Ա-քունքոսկրերի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիան

Բ-քունքոսկրերի համակարգչային տոմոգրաֆիան

Գ-աուդիոմետրիան

Դ-քունքոսկրերի ռենտգենոգրաֆիան ըստ Շյուլլերի և Մայերի

166. Տարածուն ցիանոզը, ստրիդորային շնչառությունը, հարկադրական դիրքը, շնչառության ակտին օժանդակ մկանների ակտիվ մասնակցությունը բնութագրում են.

Ա-բրոնխային ասթման

Բ-թոքերի էմֆիզեման

Գ-կոկորդի սուբկոմպենսացված ստենոզը

Դ-կոկորդի դեկոմպենսացված ստենոզը

167. Ձայնային ծալքի պոլիպի բուժումը ներառում է

Ա-վիրաբուժական բուժում, հետվիրահատական շրջանում՝ ֆոնոպեդիա

Բ-լազերային թերապիա

Գ-ինհալացիոն թերապիայի կուրս

Դ-համակցված պահպանողական բուժում

168. Մենիերի հիվանդության ընթացքի սկզբնական փուլը բնութագրվում է.

Ա-երկկողմանի խառը ծանրալսությամբ

Բ-կայուն միակողմանի սենսոնեյրալ ծանրալսությամբ

Գ-մեկ ականջի ֆլուկտուացվող ծանրալսությամբ

Դ-երկկողմանի սենսոնեյրալ ծանրալսությամբ

169. Պարատոնզիլյար թարախակույտի կլինիկական նշաններին են դասվում.

Ա-միակողմանի ցավը ծամելիս, հարբուխը

Բ-երկարատև ինտոքսիկացիան, «գնդիկի» զգացողությունը կոկորդում

Գ-կոկորդի սուր ցավը, տրիզմը, թքարտադրությունը, տենդը

Դ-հաճախակի խորխոտ հազը, ձայնի խռպոտությունը

170. Ձայնի ինտենսիվությունը և բարձրությունը (ուժգնությունը) որպես հասկացություններ բնութագրվում են որպես.

Ա-նույնական

Բ-հոմանիշներ

Գ-ինքնուրույն

Դ-հականիշներ

171. Կատարալ անգինան բնութագրվում է.

Ա-քմային աղեղների և քմային նշիկների հիպերեմիայով

Բ-քմային նշիկների լակունաների բերանների լայնացմամբ

Գ-լակունաներում սպիտակ կամ բաց դեղնավուն փառով

Դ-թարախակալած ֆոլիկուլներով

172. Առաջնային բուժսանիտարական օգնության փուլում բերանի խոռոչի և ըմպանի օրգանների քաղցկեղի հայտնաբերմանն ուղղված ախտորոշիչ միջոցառումներին են դասվում.

Ա-անուղղակի լարինգոսկոպիան հյուսվածաբանական հետազոտությամբ, արյան իմունաքիմիական հետազոտությունը

Բ-ֆիբրոլարինգոսկոպիան հյուսվածաբանական, բջջաբանական հետազոտություններով

Գ-ֆարինգոսկոպիան, արյան իմունաքիմիական հետազոտությունը

Դ-ուղղակի լարինգոսկոպիան բջջաբանական հետազոտությամբ

173. Առաջնային բուժսանիտարական օգնության փուլում կոկորդի քաղցկեղի հայտնաբերմանն ուղղված խորհուրդ տրվող ախտորոշիչ միջոցառումներին են դասվում.

Ա-առաջավերին միջնորմի ավշային հանգույցների ՈՒՁՀ-ն

Բ-անուղղակի լարինգոսկոպիան

Գ-ֆիբրոլարինգոսկոպիան

Դ-կոկորդի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիան

174. Բուլյոզ օտիտ դիտվում է.

Ա-քութեշի ժամանակ

Բ-կապույտ հազի ժամանակ

Գ-կարմրուկի ժամանակ

Դ-գրիպի ժամանակ

175. Ֆարինգոմիկոզի հարուցիչներն են.

Ա-Candida ցեղի սնկերը

Բ-Staphylococcus aureus-ը

Գ-Haemophilus influenzae-ն

Դ-Chlamydia pneumoniae-ն 179 Երեխաների մոտ ստորին քթանցքի ձևավորումը տեղի է ունենում. 1) մինչև 10 տարեկանը 2) մինչև ծնվելը 3) մինչև 4 տարեկանը 4) մինչև 7 տարեկանը

176. Կոկորդի օդային կիստաները սկիզբ են առնում.

Ա-կոկորդի փորոքներից

Բ-տանձաձև ծոցերից

Գ-վալլեկուլաներից

Դ-վահանաենթալեզվային թաղանթից

177. Կոկորդի քրոնիկ սպիական ստենոզների վիրաբուժական բուժման մեթոդն ըստ Իվանովի ներառում է.

Ա-հինգ փուլ

Բ-չորս փուլ

Գ-երեք փուլ

Դ-երկու փուլ

178. Լարինգոտրախեիտին բնորոշ է ախտանիշների եռյակ, որը ներառում է հաչոցանման հազ, խռպոտություն և

Ա-դիսֆագիա

Բ-մարմնի ջերմության բարձրացում

Գ-շնչահեղձություն

Դ-կոկորդի ցավ

179. Իսկական ձայնային ծալքերը ծածկող էպիթելը կոչվում է.

Ա-բազմաշերտ տափակ եղջերացող

Բ-բազմաշերտ տափակ չեղջերացող

Գ-խորանարդաձև

Դ-բազմաշարք գլանաձև թարթչավոր

180. Քրոնիկ լարինգիտի ժամանակ փոփոխությունները տեղի են ունենում գլխավորապես.

Ա-մատանիաշերեփաձև հոդի շրջանում

Բ-մակկոկորդի շրջանում

Գ-ենթաձայնածալքային տարածության շրջանում

Դ-ձայնային ծալքերի շրջանում

181. Կոկորդի լուսանցքը նեղացնող մկանը կոչվում է.

Ա-կողմնային մատանիաշերեփաձև

Բ-հետին մատանիաշերեփաձև

Գ-ձայնային

Դ-կրծքավահանաձև

182. Քթի միջնապատի պերֆորացիայի առաջացման կարող է հանգեցնել.

Ա-քթի միջնապատի վրա կատարված վիրահատական միջամտությունը

Բ-սուր թարախային սինուսիտը

Գ-էնդոսկոպիկ ադենոտոմիան

Դ-վերին ծնոտային խոռոչի պունկցիան

183. Կատարալ անգինային բնորոշ կլինիկական դրսևորումներին է դասվում.

Ա-մոխրագույն խիտ թաղանթների առկայությունը

Բ-սպիտակ փառով ծածկված խոցերի առկայությունը

Գ-քմային նշիկների լորձաթաղանթի գունատությունը

Դ-քմային նշիկների հիպերեմիան և այտուցը

184. Կավերնոզ ծոցին սահմանակից է սեպոսկրային խոռոչի _____ պատը:

Ա-միջային

Բ-վերին

Գ-կողմնային

Դ-ստորին

185. Օտոգեն մենինգիտին բնորոշ ախտանիշներին է դասվում.

Ա-ծոծրակային մկանների կարկամությունը

Բ-գլխացավի բացակայությունը

Գ-ենթամաշկային «աստղիկ» արյունազեղումները

Դ-անիզոկորիան

186. Հետըմպանային թարախակույտի՝ ըմպանի վերին բաժնում տեղակայման դեպքում բնորոշ է.

Ա-քթով շնչառության դժվարացումը

Բ-ծամիչ մկանների տրիզմը

Գ-գլխի հարկադրական դիրքը

Դ-հիպերսալիվացիան

187. Հետըմպանային տարածությունը հաղորդակցվում է.

Ա-հետին միջնորմի հետ

Բ-առաջային միջնորմի հետ

Գ-պարաֆարինգեալ տարածության հետ

Դ-ռետրոֆարինգեալ տարածության հետ

188. Շնչուղիների սկլերոման

Ա-ուռուցքային պրոցես է

Բ-ինֆեկցիոն հիվանդություն է

Գ-հորմոնային հիվանդություն է

Դ-նյութափոխանակային-դիստրոֆիկ հիվանդություն է 192. Երեխաների սուր լարինգոտրախեիտի առավել բնորոշ ախտանիշներն են. 1) ձայնի փոփոխությունը, կոպիտ հաչոցանման հազը, ստենոտիկ շնչառությունը 2) ձայնի փոփոխությունը, ցավը կուլ տալիս, ենթածնոտային ավշային հանգույցների մեծացումը 3) ձայնի փոփոխությունը, ցավը կուլ տալիս, ծամիչ մկանների տրիզմը 4) ձայնի փոփոխությունը, ջերմության բարձրացումը, ենթածնոտային ավշային հանգույցների մեծացումը

189. Ալերգիկ ռինիտի ժամանակ քթի լորձում գերազանցապես հայտնաբերում են

Ա-պարարտ բջիջներ

Բ-մակրոֆագեր

Գ-բազոֆիլներ

Դ-էոզինոֆիլներ

190. Քթի խոռոչի անոթային ուռուցքի առաջատար կլինիկական նշանն է.

Ա-քթի փակվածությունը

Բ-քթային արյունահոսությունը

Գ-քթի ցավը

Դ-քթից լորձային արտադրությունը

191. Ռնգախոսություն են անվանում.

Ա-ըմպանի խոսքային ֆունկցիայի փոփոխությունը

Բ-խռպոտությունը

Գ-ձայնի տեմբրի ախտաբանական փոփոխությունը

Դ-ձայնի լրիվ կորուստը

192. Սուր սինուսիտի հիմնական բակտերիալ հարուցիչներն են հեմոֆիլ ցուպիկը և

Ա-մորաքսելան

Բ-ոսկեգույն ստաֆիլոկոկը

Գ-պնևմոկոկը

Դ-β-հեմոլիտիկ ստրեպտոկոկերը

193. Ներկայումս օզենայի առաջացման առավել հիմնավորված տեսությունն է

Ա-«լայն դեմքի» անթրոպոմետրիկ տեսությունը

Բ-ինֆեկցիոն տեսությունը

Գ-էնդոկրին-վեգետատիվ տեսությունը

Դ-սոցիալական տեսությունը

194. Մեզոտիմպանիտի ժամանակ պերֆորացիան տեղակայվում է թմբկաթաղանթի _____

Ա-ձգված մասում

Բ-չձգված մասում

Գ-առաջաստորին քառորդում

Դ-հետաստորին քառորդում

195. Քթի ֆուրունկուլի հնարավոր բարդություն է.

Ա-կավերնոզ ծոցի թրոմբոզը

Բ-սուր սինուսիտը

Գ-քթի միջնապատի դեֆորմացիան

Դ-սուր ռինիտը

196. Քունքոսկրի բրգի կոտրվածքի գծի հիմնական ուղղությունները, որոնք որոշում են ականջի վնասվածքային ախտահարումների կլինիկան, հետևյալն են.

Ա-առանցքային և հիմային

Բ-կողմնային և միջային

Գ-երկայնական և լայնական

Դ-վերին և ստորին 201.Կոկորդի նախաքաղցկեղային հիվանդություն է. 1) տուբերկուլոզը 2) անգիոման 3) ձայնային ծալքի ֆիբրոման 4) պապիլոմատոզը

197. Ըմպանի օտար մարմինների հիմնական ախտանիշն է՝

Ա-կոկորդում քոր ու քերծման զգացումը

Բ-ցավը կլման ժամանակ

Գ-ծամիչ մկանների տրիզմը

Դ-բերանից տհաճ հոտը

198. Սուբֆեբրիլիտետ և զննման ժամանակ քթի ծայրի ցավոտ ուռածություն հիվանդի նախնական ախտորոշումը կլինի.

Ա-քթի ֆուրունկուլ

Բ-քթի վնասվածք

Գ-քթի հեմատոմա

Դ-սուր ռինիտ

199. Օտոսկլերոզի դեպքում Վեբերի փորձում ձայնը լատերալիզացվում է դեպ

Ա-երկու ականջները

Բ-վատ լսող ականջը

Գ-լավ լսող ականջը

Դ-ծոծրակը

200. Ձայնի լատերալիզացիան հետազոտում են հետևյալ փորձով.

Ա-Շվաբախի

Բ-Ռիննեի

Գ-Վեբերի

Դ-Ֆեդերիչիի

201. Կոկորդի սուր ստենոզի դեպքում բուժհաստատությունից դուրս կատար

Ա-միկրոտրախեոտոմիա

Բ-տրախեոստոմիա

Գ-կոնիկոտոմիա

Դ-տրախեոտոմիա

202. Մեկ քմային նշիկի մակերեսային խոցերը պատված կանաչ փառով և նեխահոտով, բնորոշ են.

Ա-Սիմանովսկի-Պլաուտ-Վենսանի անգինային

Բ-պարատոնզիլյար թարախակույտին

Գ-ինտրատոնզիլյար թարախակույտին

Դ-քրոնիկ տոնզիլիտին

203. Վոյաչեկի աղյուսակն օգտագործում են.

Ա-լսողական փողի կաթետերիզացիայի համար

Բ-շշուկային խոսքի հետազոտության համար

Գ-պտտողական փորձի համար

Դ-կալորիկ փորձի համար

204. Ֆոլիկուլյար անգինայի դեպքում ֆարինգոսկոպիկ պատկերը բնութագր

Ա-նշիկները՝ մոխրագույն-կեղտոտ փառով պատված արյունազեղումների հատվա

Բ-ցիանոտիկ երանգով ոչ վառ հիպերեմիայով, լակունաների շրջանում և/կամ նշի ըմպանային մակերեսին փառերով

Գ-քմային նշիկների ինֆիլտրացիայով, այտուցվածությամբ՝ տարածումով աղեղնե փափուկ քիմքի վրա, նշիկների մակերեսին դեղնասպիտակավուն կետերով

Դ-նշիկների մեծացումով, այտուցվածությամբ և անոթների ինյեկցիայով

205. Մինչև երեք տարեկան երեխաների անգինաները, որպես կանոն, հարուց

Ա-վիրուս-բակտերիալ ասոցիացիայով

Բ-A խմբի բետա-հեմոլիտիկ ստրեպտոկոկով

Գ-վիրուսներով

Դ-պայմանական ախտածին ֆլորայով

206. Ըմպանի տուբերկուլոզի դեպքում ցավային համախտանիշը.

Ա-հայտնաբերվում է հազվադեպ դեպքերում

Բ-չի դրսևորվում

Գ-վառ արտահայտված է, հաճախ գերակշռում է

Դ-թույլ է արտահայտված, արագ հետ է զարգանում

207. Վերծնոտային սինուսիտի բուժման ինվազիվ մեթոդն է՝

Ա-վերին ծնոտային խոռոչի պունկցիան

Բ-ՅԱՄԻԿ սինուս-կաթետերի կիրառումը

Գ-լուծույթներով սանացիայի մեթոդը ըստ Պրոետցի

Դ-հակաբիոտիկային թերապիան

208. Մաղոսկրի լաբիրինթի կոտրվածքի հավաստի ախտանիշն է.

Ա-ստորին կոպի հեմատոման

Բ-ակնոցի ախտանիշը

Գ-քթային արյունահոսությունը

Դ-ակնակապճի և դեմքի շրջանի էմֆիզեման

209. Քթի ֆուրունկուլի բացազատումից հետո նպատակահարմար է կիրառել հետևյալ լուծույթով.

Ա-ջրածնի պերօքսիդի 3%

Բ-սպիրտային 70%

Գ-հիպերտոնիկ նատրիումի քլորիդի լուծույթ

Դ-իզոտոնիկ նատրիումի քլորիդի լուծույթ

210. Քթի խոռոչի լորձաթաղանթը պատված է _____ էպիթելով

Ա-միաշերտ տափակ

Բ-բազմաշերտ տափակ

Գ-գլանաձև թարթիչավոր

Դ-բազմաշարք խորանարդաձև

211. Ադամախնձորը կազմված է _____ աճառով

Ա-վահանաձև

Բ-մատանիաձև

Գ-շերեփաձև

Դ-կոկորդըմպանային

212. Արտաքին լսողական անցուղու հետին-վերին պատի կախվածությունը բ

Ա-սուր թարախային միջին օտիտին

Բ-մաստոիդիտին

Գ-քրոնիկ թարախային էպիտիմպանոանտրալ միջին օտիտին

Դ-սուր էքսուդատիվ միջին օտիտին

213. Սուր միջին օտիտի ամենաերկար պահպանվող կլինիկական նշանն է.

Ա-լսողության իջեցումը

Բ-ցավը

Գ-թարախահոսությունը

Դ-մարմնի բարձրացած ջերմությունը

214. Երկրորդային անգինաները հաճախ ուղեկցում են.

Ա-մուկովիսցիդոզին

Բ-պսորիազին

Գ-լեյկոզին

Դ-սարկոիդոզին

215. Գլաբելա է կոչվում՝

Ա-քթի մեջքի շրջանը

Բ-քթարմատի՝ հոնքերի մակարդակին անցման գոտին

Գ-առաջային քթային առանցքից վեր գտնվող կետը

Դ-կզակի առաջային ցցված մասի գոտին

216. Պտտողական փորձն անցկացվում է հետևյալ աթոռին՝

Ա-Էվալդի

Բ-Պրոետցի

Գ-Հելմհոլցի

Դ-Բարանիի

217. Սուր լեյկոզների ժամանակ անգինաները բնութագրվում են նշիկների, փ քիմքի, լեզվի, այտերի լորձաթաղանթի ինֆիլտրացիայով՝ արագ զարգաց նեկրոտիկ քայքայմամբ, և՝

Ա-գլոսիտով, սրտխառնոցով, քրտնարտադրությամբ

Բ-նշիկների վրա փառով

Գ-ռեգիոնար լիմֆադենիտով

Դ-մոխրագույն փառով

218. Կոկորդի միակողմանի անշարժացման առաջացման հիմնական պատճառը հետևյալ նյարդի վնասումն է.

Ա-հետադարձ

Բ-լեզվաըմպանային

Գ-հավելյալ

Դ-եռորյակ

219. Քթի խոռոչի ստորին երկու երրորդը պատված է _____ էպիթել

Ա-բազմաշերտ գլանաձև թարթիչավոր

Բ-հոտառական

Գ-բազմաշերտ տափակ չեղջերացող

Դ-խորանարդաձև

220. Կոկորդի այտուցի բուժական մարտավարությունը ներառում է _____ շնչական անբավարարության դեկոմպենսացիայի դեպքում՝ շնչափողի ինտ կամ տրախեոստոմիա:

Ա-ֆիզիոթերապիա

Բ-լազերային թերապիա

Գ-հակաբակտերիալ թերապիա, իմունամոդուլացնող թերապիա

Դ-գլյուկոկորտիկոստերոիդների, հակահիստամինային դեղամիջոցների, միզամու անհապաղ համակարգային ներմուծում, գլյուկոկորտիկոստերոիդների ինհալացի

221. Ըմպանի լիմֆադենոիդ օղակը հեղինակի անունով կոչվում է.

Ա-Էպշտեյն–Բարի օղակ

Բ-Սիմոնովսկի–Վենսանի օղակ

Գ-Վալդեյեր–Պիրոգովի օղակ

Դ-Վոյաչեկի օղակ

222. Քթային արյունահոսությունների ժամանակ առաջին բժշկական օգնութ ներառում է.

Ա-արտաքին քնային զարկերակի կապումը

Բ-ներքին քնային զարկերակի կապումը

Գ-քթի առաջային տամպոնադա

Դ-հարքթային խոռոչների ռենտգենոգրաֆիան

223. Սուր սինուսիտի ախտորոշման համար անհրաժեշտ է կատարել.

Ա-կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտություն

Բ-գլխուղեղի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա

Գ-հարքթային խոռոչների ռենտգեն հետազոտություն

Դ-ԷՍԳ

224. Կոկորդի բարորակ ուռուցքների առավել տիպիկ տեղակայումը

Ա-ենթաձայնածալքային տարածությունն է

Բ-կոկորդըմպանն է

Գ-իսկական ձայնային ծալքերն են

Դ-կեղծ ձայնային ծալքերն են

225. Քթի խոռոչի զգացող նյարդավորումն իրականացվում է _____ նյա Ճյուղերով:

Ա-հոտառական

Բ-եռորյակ

Գ-թափառող

Դ-դիմային

226. Մենիերի հիվանդության սուր նոպան բնութագրվում է գլխապտույտով, իջեցմամբ, ականջների աղմուկով, հավասարակշռության խանգարմամբ, փսխումով, նոպան տևում է մինչև՝

Ա-48 ժամ

Բ-24 ժամ

Գ-մի քանի օր

Դ-մի քանի րոպե

227. Լուսային ռեֆլեքսը գտնվում է թմբկաթաղանթի _____ քառորդում:

Ա-առաջավերին

Բ-հետվերին

Գ-առաջաստորին

Դ-հետստորին

228. Կանանց մոտ օտոսկլերոզն առավել հաճախ կլինիկորեն դրսևորվում է.

Ա-վնասվածքից հետո

Բ-սուր թարախային միջին օտիտից հետո

Գ-գերսառեցումից հետո

Դ-հղիությունից հետո

229. Քթի խոռոչի երկարատև առաջային տամպոնադայի ժամանակ ամենահաճախակի բարդությունը սուր

Ա-ֆրոնտիտն է

Բ-նազոֆարինգիտն է

Գ-սֆենոիդիտն է

Դ-հայմորիտն է

230. Քրոնիկ թարախային միջին օտիտի հիմնական նշաններից մեկն է.

Ա-թմբկաթաղանթի սպիական փոփոխությունների առկայությունը

Բ-ականջի աղմուկը

Գ-ականջից պարբերական թարախահոսությունը

Դ-լսողական փողի անցանելիության խանգարումը

231. Առաջին անգամ հայտնաբերված երկկողմանի պոլիպոզ պրոցեսի տիպի դեպքերում պոլիպոզ ռինոսինուսիտի ռացիոնալ դեղորայքային թերապիա ինտրանազալ _____ դեղամիջոցների նշանակումն է.

Ա-հակահիստամինային

Բ-գլյուկոկորտիկոստերոիդներ

Գ-հակաբակտերիալ

Դ-անոթասեղմիչ

232. Ռիննեի փորձը կոնդուկտիվ ծանրալսության ժամանակ.

Ա-բացասական է

Բ-դրական է

Գ-կարճացած է

Դ-փոփոխված չէ

233. Վազոմոտոր ալերգիկ ռինիտին բնորոշ է արյան մեջ հետևյալ բջիջների քանակի ավելացումը.

Ա-մոնոցիտների

Բ-նեյտրոֆիլների

Գ-էոզինոֆիլների

Դ-բազոֆիլների

234. Ենթավերնոսկրային թարախակույտով բարդացած սուր թարախային մի հիվանդի բուժման առաջին փուլին են դասում.

Ա-անտրոմաստոիդոտոմիան՝ արտաքին լսողական անցուղու հետին պատի պահպանմամբ

Բ-տիմպանոպունկցիան և թարախակույտի պունկցիան

Գ-թարախակույտի լայն բացումը

Դ-կոնսերվատիվ՝ հակաբակտերիալ և դեզինտոքսիկացիոն թերապիայի նշանակո

235. Մոնոցիտային անգինա ախտորոշումը դրվում է հետևյալ հետազոտությ

Ա-արյան

Բ-մեզի

Գ-բակտերիոլոգիական

Դ-ցիտոլոգիական

236. Տղաների մոտ դժվարացած քթային շնչառության և ռեցիդիվող քթային արյունահոսությունների զուգակցումը թույլ է տալիս ենթադրել հետևյալ գոյացումների առկայությունը.

Ա-համարտոմա

Բ-քթի խոռոչի պոլիպներ

Գ-քթըմպանի պատանեկան անգիոֆիբրոմա

Դ-ադենոիդ վեգետացիաների

237. Ֆլուկտուացող ծանրալսությունը բնորոշ է.

Ա-Մենիերի հիվանդությանը

Բ-վեստիբուլյար նեյրոնիտին

Գ-լաբիրինթիտին

Դ-նեյրոսենսոր ծանրալսությանը

238. Լարինգոմիկոզը անհրաժեշտ է տարբերակել.

Ա-ադենոիդիտից

Բ-տրախեիտից

Գ-կոկորդի քաղցկեղից

Դ-կոկորդի կաթվածից

239. Քթային արյունահոսությունը դադարեցնելու համար սառը դնում են.

Ա-քունքերի շրջանին

Բ-ճակատի շրջանին

Գ-քթարմատի և ծոծրակի շրջանին

Դ-պարանոցի առաջային մակերեսի շրջանին

240. Հոտառության իջեցումը կոչվում է.

Ա-կակոսմիա

Բ-անոսմիա

Գ-հիպոսմիա

Դ-հիպերոսմիա

241. Ադիեզիվ միջին օտիտի հիմնական ախտանիշն է.

Ա-ականջի ցավը

Բ-ականջից թարախահոսությունը

Գ-մարմնի ջերմության բարձրացումը

Դ-ծանրալսությունը

242. Վեստիբուլյար նեյրոնիտը կլինիկորեն առաջնահերթ դրսևորվում է.

Ա-գլխապտույտով

Բ-ականջի աղմուկով

Գ-լսողության իջեցմամբ

Դ-լեզվի առաջային 2/3-ի համի զգացողության ասիմետրիայով

243. Կոկորդի քաղցկեղի վաղ նշանների դեպքում նորագոյացության հաճախ տեղակայումն է.

Ա-տանձաձև ծոցը

Բ-վեստիբուլյար ծալքը

Գ-ձայնային ծալքը

Դ-ենթաձայնային բաժինը

244. Սուր և քրոնիկ միջին օտիտների ամենահաճախ հանդիպող ներգանգայ բարդությունն է.

Ա-ուղեղի սուբդուրալ թարախակույտը

Բ-արախնոիդիտը

Գ-սինուս-թրոմբոզը

Դ-օտոգեն մենինգիտը

245. Օտոտոքսիկ ազդեցություն չունեցող հակաբիոտիկն է.

Ա-նեոմիցինը

Բ-ստրեպտոմիցինը

Գ-գենտամիցինը

Դ-պենիցիլինը

246. Արտաքին լսողական անցուղու ֆուրունկուլը զարգանում է.

Ա-միայն աճառային հատվածում

Բ-ցանկացած մասում

Գ-միայն նեղուցի շրջանում

Դ-միայն ոսկրային հատվածում

247. Կոկորդի պապիլոմաներն առավել հաճախ տեղակայվում են.

Ա-նախադռան ծալքերի մակարդակում

Բ-ձայնային ծալքերի մակարդակում

Գ-կոկորդի ենթաձայնածալքային հատվածի մակարդակում

Դ-մակկոկորդի մակարդակում

248. Մեծահասակների մոտ անգինայի բարդություն կարող է լինել հետևյալ թ

Ա-հետըմպանային

Բ-մակկոկորդի

Գ-պարատոնզիլյար

Դ-էպիդուրալ

249. Կոկորդի ստենոզի աստիճանը որոշվում է.

Ա-կլինիկական դրսևորումների տևողությամբ

Բ-ձայնի փոփոխության արտահայտվածությամբ

Գ-թոքերում խոնավ խզզոցների առկայությամբ

Դ-շնչական անբավարարության աստիճանով

250. Պինդ, կլորավուն ձևի օտար մարմինները, որպես կանոն, լսողական անց հեռացնում են՝ կիրառելով.

Ա-լվացում

Բ-ականջի աքցան

Գ-ականջի ունելի

Դ-բութ կեռիկ

251. Կոկորդի և շնչափողի հետինտուբացիոն ստենոզի առաջացման առաջա

Ա-սուր լարինգիտը հետվիրահատական շրջանում

Բ-ձայնային ծալքերի հիպոտոնուսը

Գ-հիվանդի կողմից ձայնային ռեժիմի չպահպանումը

Դ-ոչ համապատասխան չափի ինտուբացիոն խողովակի օգտագործումը

252. Մաստոիդիտով և սուբպերիոստալ թարախակույտով բարդացած սուր թարախային օտիտի դեպքում ցուցված է.

Ա-թմբկաթաղանթի պարացենտեզ

Բ-անտրոտոմիա

Գ-ականջի ընդհանուր խոռոչային վիրահատություն

Դ-անտրոմաստոիդոտոմիա

253. Ռինոգեն ներգանգային բարդություններն առավել հաճախ դիտվում են.

Ա-քթի միջնապատի հեմատոմայի դեպքում

Բ-քրոնիկ ռինիտի դեպքում

Գ-քրոնիկ վերծնոտային սինուսիտի դեպքում

Դ-քթի ֆուրունկուլի դեպքում

254. Քթի միջնապատի արյունահոսող պոլիպի հայտնաբերման դեպքում բու հիմնական մեթոդն է.

Ա-բիոպսիան

Բ-ուռուցքի հեռացումը ենթադիր հյուսվածքների հետ միասին՝ մինչև աճառը

Գ-կարճֆոկուս ճառագայթային թերապիան

Դ-նորագոյացության կոագուլյացիան

255. Մեդիաստինիտը կարող է առաջանալ որպես բարդություն.

Ա-սուր պարատոնզիլիտի

Բ-քրոնիկ ֆարինգիտի

Գ-քրոնիկ լարինգիտի

Դ-սուր ֆարինգիտի

256. Պարատոնզիլյար թարախակույտը առաջանում է որպես բարդություն.

Ա-սուր և քրոնիկ տոնզիլիտի

Բ-քրոնիկ կատարային լարինգիտի

Գ-ըմպանի քիմիական կամ ջերմային այրվածքի

Դ-սուր կամ քրոնիկ միջին օտիտի

257. Երեխաների մոտ սուր օբստրուկտիվ լարինգիտի (կրուպի) դեպքում կիր

Ա-հակաբիոտիկներ

Բ-գլյուկոկորտիկոստերոիդներ

Գ-քսանտիններ

Դ-հակահիստամինային դեղամիջոցներ 63. Կեղծ կրուպի դեպքում լարինգոսկոպիկ պատկերը բնութագրվում է. 1) մակկոկորդի մեծացմամբ 2) իսկական ձայնային ծալքերի պարեզով 3) ենթաձայնածալքային բաժնում սպիտակ թաղանթների և փառերի առկայությա 4) ենթաձայնածալքային տարածության նեղացմամբ՝ կարմիր գլանիկների տեսքո

258. Մոնոցիտար անգինան առավել հաճախ ուղեկցվում է հետևյալ համախտ

Ա-միոֆասցիալ

Բ-ռենոկարդիալ

Գ-տոնզիլոկարդիալ

Դ-հեպատոլիենալ

259. Ռիննեի բացասական փորձը ցույց է տալիս.

Ա-խառը ծանրալսություն

Բ-ձայնընկալման խանգարում

Գ-ձայնահաղորդման խանգարում

Դ-փոփոխությունների բացակայություն

260. Երկարատև քթային արյունահոսության և անարդյունավետ այրման կա կրիոազդեցության դեպքում անհրաժեշտ է.

Ա-սառը՝ ծոծրակին

Բ-արտաքին քնային զարկերակների կապումը

Գ-քթի առաջային տամպոնադան

Դ-քթի թևերի սեղմումը միջնապատին

261. Էպիտիմպանիտի դեպքում թարախային արտադրության գարշահոտութ կարելի է բացատրել.

Ա-լսողական անցքի վատ մաքրմամբ

Բ-բորբոքային պրոցեսի տևողությամբ

Գ-պրոցեսում ոսկրային հյուսվածքի ընդգրկմամբ

Դ-ոչ ռացիոնալ բուժմամբ

262. Ականջախեցու մաշկի ինֆիլտրացիան (բացի բլթակից) հետևյալի նշան

Ա-օտոհեմատոմայի

Բ-ֆուրունկուլի

Գ-ականջախեցու կարմիր քամու

Դ-ականջախեցու խոնդրոպերիխոնդրիտի

263. Կոկորդի կենտ աճառներն են մատանիաձևը, վահանաձևը և.

Ա-եղջյուրաձևը

Բ-մակկոկորդայինը

Գ-շերեփաձևը

Դ-սեպաձևը

264. Ախտանիշների եռյակը՝ գլխապտույտ, լսողության իջեցում և ականջի ա

Ա-էպիտիմպանիտին

Բ-պետրոզիտին

Գ-Մենիերի հիվանդությանը

Դ-օտոսկլերոզին

265. Քաղցկեղի դասակարգման մեջ T1 նշանով նշանակում են ուռուցք, որի դ

Ա-առաջնային ուռուցքը հայտնաբերված չէ

Բ-ուռուցքը սահմանափակված չէ օրգանի մեկ անատոմիական գոտով

Գ-ուռուցքը սահմանափակված է օրգանի մեկ անատոմիական մասով՝ մեկ անատ գոտու սահմաններում

Դ-ուռուցքը սահմանափակված է օրգանի պատերով

266. Ականջախեցին օգնում է՝

Ա-հաղորդել ձայնը

Բ-տեղորոշել ձայնը

Գ-անդրադարձնել ձայնային ալիքը

Դ-ապահովել հավասարակշռությունը

267. Թմբկաթաղանթի պարացենտեզը կատարում են _____ քառորդում

Ա-առաջային վերին

Բ-առաջային ստորին

Գ-հետին վերին

Դ-հետին ստորին

268. Կերակրափողի օտար մարմինների դեպքում կարող է զարգանալ.

Ա-մեդիաստինիտ

Բ-պարաֆարինգիտ

Գ-գաստրիտ

Դ-պերիկարդիտ

269. Գայլախտով առավել հաճախ ախտահարվում են.

Ա-ծակոտկեն թիթեղի շրջանը

Բ-քթի ստորին խեցիները

Գ-քթի թևերը և քթի միջնապատը

Դ-քթի միջին խեցիները

270. Օտոգեն ներգանգային բարդություններով հիվանդների համար առավել առաջնահերթ բուժական միջոցառումն է.

Ա-վիրաբուժական միջամտությունը

Բ-զանգվածային հակաբակտերիալ թերապիան

Գ-դեհիդրատացիան

Դ-ֆիզիոթերապիան

271. Խոլեստեատոման իրենից ներկայացնում է.

Ա-բշտանման լայնացում՝ լորձի և թարախի պարունակությամբ

Բ-ուռուցքանման գոյացություն, որը կազմված է շերտազատված էպիթելի բջիջնե խոլեստերինի բյուրեղներից

Գ-մաշկի ճարպագեղձից առաջացող բարորակ ուռուցք

Դ-էպիդերմիսի բջիջներից զարգացող չարորակ ուռուցք

272. Ռինոգեն ներգանգային բարդությունների դեպքում բուժական մարտավ

Ա-ախտահարված խոռոչի վիրաբուժական սանացիան՝ հետագա համակցված պահպանողական թերապիայով

Բ-ախտահարված խոռոչի պունկցիան, հակաբակտերիալ թերապիան

Գ-խոռոչի լվացումը ըստ Պրոյեցի, դեզինտոքսիկացիոն թերապիան

Դ-խոռոչի դրենավորումը, հակաբիոտիկների մեծ դեղաչափերի ներերակային ներ գոտկային պունկցիան, դեհիդրատացիոն թերապիան

273. Քթի միջնապատի թարախակույտի ամենահաճախ հանդիպող պատճառն է.

Ա-սուր թարախային սինուսիտը

Բ-պոլիպոզ ռինոսինուսիտը

Գ-սուր ռինիտը

Դ-քթի վնասվածքը

274. Կոկորդում կոնտակտային խոցերը և կոնտակտային գրանուլեմաներ առաջանում են.

Ա-կոկորդի լորձաթաղանթի հաճախակի բորբոքումների դեպքում

Բ-ձայնային գերծանրաբեռնվածության, երկարատև ինտուբացիայի դեպքում

Գ-կոկորդի վիրուսային ախտահարման դեպքում

Դ-շերեփաձև աճառի ձայնային ելունների գիգանտիզմի դեպքում 281 . «Մոնոցիտար անգինա» ախտորոշումը դրվում է հետազոտելուց հետո. 1) մեզը 2) արյունը 3) խորխը 4) արտադրությունը 282 . Քթի ֆուրունկուլի բարդություն է. 1) ռինիտը 2) թարախային պրոցեսը գանգի խոռոչում 3) օտիտը 4) լարինգիտը 283.Մեծացած ադենոիդ վեգետացիաների ֆոնին զարգացած էքսուդատիվ միջին օտիտի բուժման հիմնական սկզբունքը հետեյալի իրականացումն է. 1) ընդհանուր և տեղային մուկոլիտիկ թերապիա 2) ֆիզիոթերապիա՝ հետականջային շրջանում լիդազայով և ներքթային կալիումով էլեկտրոֆորեզի ծավալով 3) լսողական փողի կաթետերիզացիա՝ իրիգացիոն թերապիայով 4) թմբկախոռոչի շունտավորում՝ ադենոտոմիայով 284 . Արտաքին լսողական անցքի ատրեզիայի դեպքում առավել հաճախ հանդիպում է ծանրալսության _____ ձևը: 1) նեյրոէպիթելային 2) նեյրոսենսոր 3) կոնդուկտիվ 4) խառը

275. Քթի միջնապատից քթային արյունահոսությունների հիմնական աղբյուրը _____ բաժինն է:

Ա-հետին

Բ-վերին

Գ-միջին

Դ-առաջային

276. Երկրորդ աստիճանի այրվածքների դեպքում ականջախեցու փոփոխությունները բնութագրվում են.

Ա-ականջախեցու հյուսվածքների ածխացմամբ

Բ-ականջախեցու ամբողջ մաշկի վառ հիպերեմիայով

Գ-այրված մակերեսին բշտերի առաջացմամբ

Դ-մաշկի առածգականության կորստով, չորությամբ, մուգ գունավորմամբ

277. Քրոնիկ լարինգիտը կոկորդի լորձաթաղանթի քրոնիկ բորբոքային հիվանդություն է, որի տևողությունը գերազանցում է (օրերով).

Ա-21

Բ-14

Գ-7

Դ-3

278. Ձայնային ծալքի հարթ մակերեսով, լայն հիմքի վրա տեղակայված կլորավուն անգիոմատոզ գոյացություն է.

Ա-պոլիպը

Բ-պապիլոման

Գ-կիստան

Դ-հանգույցիկը

279. Վերին տրախեոտոմիան շնչափողի հատումն է.

Ա-վահանագեղձի պարանոցից ներքև

Բ-վահանագեղձի պարանոցից վերև

Գ-վահանագեղձի պարանոցի միջով

Դ-շնչափողի առաջին օղի շրջանում

280. Կոմպենսացիայի փուլում կոկորդի ստենոզի նշաններն են.

Ա-ինսպիրատոր հևոց ֆիզիկական և հոգեհուզական ծանրաբեռնվածության ժամանակ, շնչառության դանդաղեցում, մաշկի սովորական գույն

Բ-էքսպիրատոր հևոց ֆիզիկական և հոգեհուզական ծանրաբեռնվածության ժամանակ, շնչառության հաճախացում, ակրոցիանոզ

Գ-կրծքավանդակի տեղի տվող մասերի ներքաշում, շնչառության հաճախացում, մաշկածածկույթների գունատություն

Դ-մարմնի հարկադրական դիրք, շնչառության բացակայություն, մաշկի ցիանոզ

281. Կոկորդի դիֆթերիայով պայմանավորված կոկորդի ստենոզի դեպքում պետք է Կատարել.

Ա-ինտուբացիա

Բ-կոկորդից թաղանթների հեռացում ասպիրատորով

Գ-տրախեոստոմիա

Դ-կոնիկոտոմիա

282. Քրոնիկ լարինգիտի սահմանափակ ձևերի ախտորոշման մեթոդ է.

Ա-կոկորդի ուլտրաձայնային հետազոտությունը

Բ-վիդեոլարինգոստրոբոսկոպիան

Գ-սպիրոմետրիան

Դ-կոկորդի ՀՏ-ն

283. Սիմանովսկի–Պլաուտ–Վենսանի անգինայի առաջացման պատճառ է.

Ա-տուբերկուլոզի կորինեբակտերիան

Բ-ոսկեգույն ստաֆիլոկոկը

Գ-բերանի խոռոչի սպիրոխետի և իլիկաձև ցուպիկի սիմբիոզը

Դ-իլիկաձև ցուպիկը

284. Վեստիբուլյար ապարատի ֆունկցիաներին է դասվում.

Ա-առարկայի չափի որոշումը

Բ-հոտերի ճանաչումը

Գ-հավասարակշռության պահպանումը

Դ-խորը զգացողությունը

285. Ասֆիքսիայի փուլում կոկորդի ստենոզի ախտանիշներին է դասվում.

Ա-աղմկոտ, հեռվից լսելի շնչառությունը

Բ-արտահայտված ինսպիրատոր հևոցը

Գ-շնչառական շարժումների դանդաղումը ու խորացումը

Դ-Չեյն–Ստոքսի տիպի մակերեսային ընդհատվող շնչառությունը

286. Կոկորդի վերին հարկի ախտահարման դեպքում կոկորդի քաղցկեղի առաջատար ախտանիշն է.

Ա-ինսպիրատոր հևոցը

Բ-դիսֆագիան

Գ-հազը

Դ-դիսֆոնիան

287. Սուր թարախային միջին օտիտով երեխաների մեկնարկային հակաբակտերիալ թերապիան ներառում է.

Ա-ազիտրոմիցինի նշանակում՝ 10 մգ/կգ օրը 1 անգամ

Բ-ամոքսիցիլինի նշանակում՝ 40-90 մգ/կգ/օր 3 ընդունմամբ

Գ-գենտամիցինի նշանակում՝ 3-5 մգ, օրը 3 անգամ

Դ-մետրոնիդազոլի նշանակում՝ 20-30 մգ/կգ օրական

288. Քթի ոսկրերի կոտրվածքի պաթոգնոմոնիկ նշաններն են.

Ա-հեմատոման, քթադիմային շրջանի փափուկ հյուսվածքների կրեպիտացիան և արյունազեղումը սկլերաներում

Բ-վնասվածքից հետո քթային շնչառության դժվարացումը, ցավը քթի շրջանում, արյունային արտադրությունը քթից

Գ-քթի փափուկ հյուսվածքների շրջանի այտուցվածությունն ու ցավը, ուժեղ քթային արյունահոսությունը

Դ-քթի ոսկրերի ախտաբանական շարժունությունն ու կրեպիտացիան, արտաքին քթի դեֆորմացիան

289. Կոկորդի կիստաները տեղակայվում են

Ա-կոկորդի ցանկացած բաժնում

Բ-միայն ձայնային ծալքերի վրա

Գ-միայն մակկոկորդի շրջանում

Դ-միայն շերեփամակկոկորդային ծալքերի շրջանում

290. Ճակատային խոռոչի օստեոման բնութագրվում է

Ա-նկատելի դեֆորմացիայի բացակայությամբ

Բ-դանդաղ աճով

Գ-քթային շնչառության խանգարմամբ

Դ-մետաստազների առկայությամբ

291. Քիթը եւ հարքթային խոռոչներն արյունամատակարարվում են

Ա-արտաքին եւ ներքին քնային զարկերակների համակարգից

Բ-ողնաշարային զարկերակի համակարգից

Գ-լեզվային զարկերակի համակարգից

Դ-վերին վահանային զարկերակից

292. Քթըմպանի առավել հաճախ հանդիպող ուռուցքն է.

Ա-շվանոման

Բ-նեյրոֆիբրոման

Գ-յուվենիլ անգիոֆիբրոման

Դ-էսթեզիոնեյրոցիտոման

293. Պարատոնզիլիտի՝ աբսցեսավորման փուլ անցնելու անուղղակի նշան է.

Ա-ընդհանուր վիճակի վատթարացումը

Բ-կոկորդի միակողմանի ցավը

Գ-տրիզմը

Դ-տենդը

294. Կոկորդային անգինա է կոչվում.

Ա-կոկորդի աճառների բորբոքումը

Բ-սկլերոման

Գ-կոկորդի լիմֆադենոիդ հյուսվածքի բորբոքումը

Դ-մակկոկորդի լորձաթաղանթի բորբոքումը

295. Արտաքին լսողական անցուղու հետին վերին պատի կախվածությունը բնորոշ է.

Ա-սուր թարախային միջին օտիտին

Բ-մաստոիդիտին

Գ-քրոնիկ թարախային էպիտիմպանիտին

Դ-սուր էքսուդատիվ միջին օտիտին

296. Երեխաների մոտ օտոսկոպիայի ժամանակ ականջախեցին ձգում են.

Ա-վեր և հետ

Բ-վար և հետ

Գ-առաջ՝ դեպի իրեն

Դ-առաջ և վար

297. Կոկորդի միջին հարկի քաղցկեղի դեպքում առավել վաղ ախտանիշներին է դասվում.

Ա-շնչառության խանգարումը

Բ-կլման դժվարացումը

Գ-կոկորդի ցավը

Դ-ձայնի խանգարումը

298. Սուր բակտերիալ սինուսիտի հարուցիչներ առավել հաճախ հանդիսանում են

Ա-վիրուսները

Բ-β-հեմոլիտիկ ստրեպտոկոկերը

Գ-անաէրոբները

Դ-պնևմոկոկը եւ հեմոֆիլային ցուպիկը

299. Սուր պրոֆեսիոնալ լարինգիտի հիմնական պատճառն է.

Ա-ձայնային զգալի ծանրաբեռնվածությունը

Բ-պարանոցի տրավմատիկ վնասումը

Գ-ռեցիդիվող սուր սինուսիտը

Դ-վահանագեղձի իջեցված ֆունկցիան

300. Սեպոսկրային խոռոչ էնդոսկոպիկ մուտքն իրականացվում է _____ քթանցքով:

Ա-վերին

Բ-միջին

Գ-ընդհանուր

Դ-ստորին

301. Սուր լարինգիտի ինֆիլտրատիվ եւ աբսցեսավորվող ձևերի հնարավոր բարդություններին են դասվում.

Ա-պարանոցի ֆլեգմոնաները եւ մեդիաստինիտը

Բ-քրոնիկ տոնզիլիտը

Գ-դեստրուկտիվ վերին ծնոտային ռինոսինուսիտը

Դ-ախտահարման կողմի սուր թարախային օտիտը

302. Օտոգեն սեպսիսին բնորոշ ախտանիշներն են մաշկածածկույթների. գունատությունը (հողագույն երանգով), մաշկի դեղնությունն ու սկլերաների իկտերիկությունը, Գրիզինգերի կամ Ուայթինգի դրական ախտանիշը եւ

Ա-հեկտիկ ռեմիտող տենդը՝ դողով

Բ-հեկտիկ ջերմությունը՝ առանց դողի

Գ-հեկտիկ ռեմիտող տենդը

Դ-բարձր ջերմությունը

303. Այն փոսությունը, որտեղ վերին ծնոտի ոսկորն առավել բարակած է, կոչվում է fossa

Ա-coronoidea

Բ-mandibularis

Գ-jugularis

Դ-canina

304. Սուր թարախային միջին օտիտի պերֆորատիվ փուլին բնորոշ է.

Ա-թարախահոսությունն ականջից, լսողության իջեցումը

Բ-ականջից արտադրության դադարը, լսողության բարելավումը

Գ-ականջի ցավը, ջերմության բարձրացումը

Դ-ականջի աղմուկը, ծանրության զգացողությունն ականջում

305. Բերանըմպանի եւ կոկորդըմպանի սահմաններին է դասվում.

Ա-մակկոկորդի ազատ մակերեսի վերին եզրով անցկացված հարթությունը

Բ-քմային վարագույրը, սեպոսկրի մարմինը

Գ-կարծր քիմքի՝ մտովի դեպի հետ շարունակված հարթությունը

Դ-բերանըմպանի վալեկուլաները, մակկոկորդը

306. Ակնակապիճի էմֆիզեմայի պատճառ կարող է լինել.

Ա-քթի ոսկրերի կոտրվածքը

Բ-գանգի հիմքի կոտրվածքը

Գ-վերին ծնոտի կոտրվածքը

Դ-ճակատային խոռոչի պատերի կոտրվածքը

307. Ադհեզիվ միջին օտիտի դեպքում ներկայացվող հիմնական գանգատներին են դասվում.

Ա-ականջից պարբերական արտադրությունը

Բ-ականջի աղմուկը և լսողության կայուն իջեցումը

Գ-լսողության բարելավումն աղմկոտ միջավայրում

Դ-լսողության վատթարացումն աղմկոտ միջավայրում

308. Քրոնիկ լարինգիտին բնորոշ է.

Ա-ձայնի փոփոխությունը՝ խռպոտությունից մինչև աֆոնիա

Բ-ցավը կլման ժամանակ

Գ-ծամիչ մկանների տրիզմը

Դ-արյունախխումը

309. Կոկորդում գնդի մշտական զգացողությունը, որը չի խանգարում կլմանը, կարող է վկայել.

Ա-պարանոցային սպոնդիլոզի մասին

Բ-կերակրափողի դիվերտիկուլի մասին

Գ-հիատերիայի մասին

Դ-ըմպանի կամ կերակրափողի քաղցկեղի մասին

310. Բալոտացիայի ախտանիշը բնորոշ է օտար մարմնին՝ տեղակայված

Ա-թոքում

Բ-բրոնխում

Գ-շնչափողում

Դ-կերակրափողում

311. Երեխաների մոտ ձայնալարերի այտուցի արագ զարգացման հնարավորությունը պայմանավորված է.

Ա-ձայնալարերի վիճակով

Բ-դրանցում ենթալորձային հիմքի առկայությամբ և վասկուլյարիզացիայի բարձր աստիճանով

Գ-կոկորդի մկանային ապարատի առանձնահատկություններով

Դ-ձայնաճեղքի նեղությամբ

312. Սինուս-թրոմբոզն ավելի հաճախ առաջանում է.

Ա-քթի ֆուրունկուլի դեպքում

Բ-սուր ֆրոնտիտի դեպքում

Գ-սուր վերին ծնոտային սինուսիտի դեպքում

Դ-պարատոնզիլյար թարախակույտի դեպքում

313. Թմբկախոռոչում օդի ճնշումը կարգավորվում է.

Ա-լսողական փողի օդափոխիչ ֆունկցիայի հաշվին

Բ-թմբկախոռոչի մկանների գործունեության հաշվին

Գ-թմբկաթաղանթի լարվածության հաշվին

Դ-ըմպանի մկանների գործունեության հաշվին

314. Վերին ծնոտային խոռոչի պունկցիան կատարում են _____ քթանցքով:

Ա-վերին

Բ-ընդհանուր

Գ-միջին

Դ-ստորին

315. Ըմպանի նեկրոտիկ փոփոխությունները, փառերը, արյան մեջ լեյկոպենիան, հատիկավոր լեյկոցիտների նվազած քանակը բնորոշ են անգինայի հետևյալ ձևին՝

Ա-դիֆթերիային

Բ-ագրանուլոցիտային

Գ-խոցաթաղանթային

Դ-ֆլեգմոնոզ

316. Լսողական ոսկրիկների (մուրճիկի, սալի և ասպանդակի) զարգացման վերջնական ժամկետն է.

Ա-կյանքի առաջին տարվա վերջը

Բ-սաղմնային կյանքի 6-րդ շաբաթը

Գ-կյանքի 6-րդ ամիսը

Դ-ծննդյան պահը

317. Կոկորդի շարժողական նյարդավորումը հիմնականում ապահովում է _____ նյարդը:

Ա-լեզվաըմպանային

Բ-եռորյակ

Գ-վերին կոկորդային

Դ-հետադարձ

318. Երեխաների լսողության հետազոտման օբյեկտիվ մեթոդ է.

Ա-լսողության հետազոտումը շշուկային և խոսակցական խոսքի միջոցով

Բ-ուշացած հարուցված օտոակուստիկ էմիսիան

Գ-կամերտոնային փորձերի կատարումը

Դ-խաղային աուդիոմետրիան

319. Քրոնիկ լարինգիտի ձև է.

Ա-կատարալը

Բ-ռեցիդիվողը

Գ-ենթասուրը

Դ-նեկրոտիկը

320. Պարատոնզիլյար թարախակույտի բուժման հիմնական մեթոդն է.

Ա-թարախակույտի բացումը կամ աբսցեսէկտոմիան

Բ-բերանի խոռոչի ողողումը և հակաբիոտիկոթերապիան

Գ-ախտորոշիչ պունկցիան եւ դեզինտոքսիկացիոն թերապիան

Դ-լազերա- և կրիոթերապիան

321. Քթի ֆուրունկուլի բացումը կատարվում է _____ փուլում

Ա-լուծման

Բ-սպիացման

Գ-ինֆիլտրացիայի

Դ-թարախակալման (աբսցեսավորման)

322. Մենյերի հիվանդության պաթոգենեզը պայմանավորված է.

Ա-օտոլիթային թաղանթների քայքայմամբ

Բ-մազիկավոր բջիջների ախտահարմամբ

Գ-ներլաբիրինթային ճնշման նվազմամբ

Դ-էնդոլիմֆայի ճնշման բարձրացմամբ և լաբիրինթի այտուցով (հիդրոպս)

323. Կոկորդում պախիդերմիայի տիպիկ տեղակայումն է.

Ա-ձայնային ծալքերի միջին երրորդականը

Բ-ձայնային ծալքի առաջային և միջին երրորդականների սահմանը

Գ-առաջային կոմիսուրան

Դ-միջշերեփաձև տարածության շրջանը

324. Նեյրոսենսոր ծանրալսության դեպքում տիմպանոմետրիկ կորը ցույց է տալիս _____ տիպը:

Ա-D

Բ-B

Գ-A

Դ-C

325. Այն ստենոզների դեպքում, որոնց ծագման մեջ առաջատար դեր է խաղում կոկորդի լորձաթաղանթի արտահայտված այտուցը, անհրաժեշտ է շտապ թերապիա, որը ներառում է _____ նշանակումը.

Ա-կալցիումի գլյուկոնատի և նատրիումի թիոսուլֆատի

Բ-զանգվածային հակաբակտերիալ թերապիայի

Գ-կորտիկոստերոիդային և հակահիստամինային դեղամիջոցների

Դ-համակարգային հակավիրուսային դեղամիջոցների

326. Քթի բարորակ ուռուցքներից ծաղկակաղամբի տեսք ունի.

Ա-խոնդրոման

Բ-անգիոֆիբրոման

Գ-պապիլոման

Դ-ֆիբրոման

327. Ռինոլալիան բնութագրվում է հնչյունարտաբերման և _____ խանգարմամբ.

Ա-խոսքի ընկալման

Բ-ձայնի բարձրության

Գ-ձայնի տեմբրի

Դ-խոսքի ռիթմի վերարտադրման

328. Օտոգեն մենինգիտը.

Ա-գլխուղեղում թարախի սահմանափակ կուտակում է, որն առաջանում է երկրորդային՝ հարքթային խոռոչներում օջախային վարակի առկայության դեպքում

Բ-ախտաբանական ախտանիշային համալիր է, որը պայմանավորված է բորբոքման օջախից միկրոօրգանիզմների մշտական կամ պարբերական մուտքով արյուն

Գ-գլխուղեղի թաղանթների բորբոքում է, որը զարգանում է քթի խոռոչից և հարքթային խոռոչներից վարակի տարածման հետևանքով

Դ-գլխուղեղի փափուկ թաղանթների տարածուն թարախային բորբոքում է, որը զարգանում է միջին ականջի կողմից բակտերիալ վարակման հետևանքով

329. Քմային նշիկի չարորակ նորագոյացության առավել տիպիկ նշանն է

Ա-խոցի առկայությունը նշիկի վրա

Բ-քմային նշիկի հիպերեմիան

Գ-թարախի առկայությունը լակունաներում

Դ-նշիկի ատրոֆիան

330. Քմային նշիկներն այտուցված են, հիպերեմիկ, մակերեսին՝ լակունաների ընթացքով հեշտությամբ հեռացվող փառեր, ջերմությունը բարձրացած է մինչև 38-39°C, պարանոցային ռեգիոնար ավշային հանգույցները մեծացած են.

Ա-լակունար անգինայի դեպքում

Բ-ֆոլիկուլյար անգինայի դեպքում

Գ-կատարալ անգինայի դեպքում

Դ-պարատոնզիլյար թարախակույտի դեպքում

331. Անգինայի ամենահաճախ բակտերիալ հարուցիչն է.

Ա-մենինգոկոկը

Բ-ստաֆիլոկոկը

Գ-β-հեմոլիտիկ ստրեպտոկոկը

Դ-պնևմոկոկը

332. Միրինգիտ է կոչվում _____ բորբոքումը.

Ա-միջին ականջի լորձաթաղանթի և ոսկրային հյուսվածքի քրոնիկ

Բ-միայն լսողական փողի շրջանում տեղակայված

Գ-միջին ականջի լորձաթաղանթի քրոնիկ

Դ-թմբկաթաղանթի սահմաններում տեղակայված սուր

333. Դիֆթերիայի տոքսիկ ձեւը կարող է լինել հեմոռագիկ և.

Ա-կատարալ

Բ-լակունար

Գ-գանգրենոզ

Դ-ֆոլիկուլյար

334. Ռեմիսիայի փուլում գտնվող քրոնիկ միջին օտիտով հիվանդին նպատակահարմար է խորհուրդ տալ.

Ա-ամբուլատոր հսկողություն

Բ-վիրաբուժական բուժում

Գ-ականջի կաթիլների ինքնուրույն պարբերական օգտագործում

Դ-լսողական սարքի օգտագործում

335. Քթըմպանի քաղցկեղի ճառագայթային թերապիայի ժամանակ ռեգիոնար գոտիների ճառագայթումն անհրաժեշտ է իրականացնել.

Ա-վիրաբուժական բուժման անարդյունավետության դեպքում

Բ-միայն պարանոցի ավշային հանգույցներում մետաստազների հաստատման դեպքում

Գ-միայն պարանոցի ավշային հանգույցներում մետաստազների կասկածի դեպքում

Դ-պարտադիր՝ բոլոր դեպքերում

336. Խխունջում առանձնացնում են _____ սանդուղք

Ա-թմբկային

Բ-վերընթաց

Գ-վայրընթաց

Դ-ամպուլային

337. Օտոսկլերոզն ավելի հաճախ հանդիպում է.

Ա-տղամարդկանց մոտ

Բ-նորածինների մոտ

Գ-պատանիների մոտ

Դ-կանանց մոտ

338. Ստորին տրախեոտոմիա է կոչվում շնչափողի օղերի հատումը.

Ա-կրծքային բաժնում

Բ-վահանաձև գեղձի պարանոցից վեր

Գ-վահանաձև գեղձի պարանոցից ներքև

Դ-վահանաձև գեղձի պարանոցի միջով

339. Քթի ոսկրերի կոտրվածքի անհապաղ ռեպոզիցիայի հակացուցում է համարվում

Ա-2-3 աստիճանի շոկը

Բ-փափուկ հյուսվածքների կտրուկ այտուցը

Գ-քթի ոսկրերի բաց կոտրվածքը

Դ-կոտրվածքի շրջանի ցավերը

340. Քմային նշիկները նյարդավորվում են թափառող նյարդի ճյուղերով, ենթալեզվային նյարդով, լեզվաըմպանային նյարդով, եռորյակ նյարդով եւ.

Ա-սիմպաթիկ ցողունով

Բ-հավելյալ նյարդով

Գ-դիմային նյարդով

Դ-վիդիևյան նյարդով

341. Կոկորդի դիֆթերիայի նշանն է.

Ա-սուր սկիզբը՝ բարձր ջերմությամբ և կատարալ երևույթներով

Բ-դիսֆոնիայի աստիճանական հարաճումը, հիվանդության 2-3-րդ օրը ստենոտիկ շնչառության զարգացումը

Գ-ստենոզի արագ զարգացումը՝ ձայնի և հազի հնչեղության պահպանմամբ

Դ-սուր սկիզբը՝ կոպիտ հաչոցանման հազով և խռպոտ ձայնով

342. Լեյկոպլակիաները դիտվում են ___ անհարթ մակերեսով սպիտակ բծերի տեսքով.

Ա-ձայնային ծալքերի վրա

Բ-ենթաձայնածալքային բաժնում

Գ-միջշերեփաձև տարածությունում

Դ-շերեփաձև աճառների շրջանում

343. Մաստոիդիտի ժամանակ կորտիկալ շերտի քայքայումը հանգեցնում է.

Ա-էպիդուրալ թարախակույտի

Բ-սուբպերիոստալ թարախակույտի

Գ-սիգմայաձև սինուսի թրոմբոզի

Դ-պերիխոնդրիտի

344. Ռոզենմյուլլերի փոսիկը գտնվում է լսողական փողի ըմպանային բացվածքից _____

Ա-հետ

Բ-առաջ

Գ-ներքև

Դ-վեր

345. Հետըմպանային թարախակույտը բնութագրվում է.

Ա-խեղդվելով (կուլ տալիս շնչահեղձությամբ), թքահոսությամբ, ձայնի տեմբրի փոփոխությամբ

Բ-ըմպանի լորձաթաղանթի կտրուկ հիպերեմիայով և այտուցով

Գ-տրիզմի պատճառով բերանի բացման դժվարությամբ

Դ-տեղային ախտանիշների առկայությամբ՝ ինտոքսիկացիայի բացակայության պայմաններում

346. Քրոնիկ էպիտիմպանիտի օտոսկոպիկ նշաններն են եզրային պերֆորացիան թուլացած մասում և.

Ա-խոլեստեատոմային զանգվածները

Բ-պոլիպը

Գ-գրանուլյացիաները

Դ-հիպերեմիան

347. Կոկորդի այտուցներն ամենից հաճախ դիտվում են.

Ա-ըմպանի բորբոքային հիվանդությունների դեպքում

Բ-ալերգիկ հիվանդությունների դեպքում

Գ-սրտային և երիկամային անբավարարության դեպքում

Դ-պարանոցի փափուկ հյուսվածքների բորբոքային հիվանդությունների դեպքում

348. Խոլեստեատոմայի դեպքում միջին ականջի ոսկրային հյուսվածքի քայքայումը պայմանավորված է _____ ազդեցությամբ:

Ա-դեզօքսիգենազի

Բ-ադենոզինտրիֆոսֆատազի

Գ-լիդազի

Դ-կոլագենազի

349. Խխունջի պերիլիմֆան խխունջի ջրատարի միջոցով հաղորդակցվում է.

Ա-միջին գանգափոսի ենթաոստայնային տարածության հետ

Բ-ուղեղի չորրորդ փորոքի հետ

Գ-հետին գանգափոսի ենթաոստայնային տարածության հետ

Դ-թմբկախոռոչի հետ

350. Դեղամիջոցները, որոնց կիրառումը կարող է հրահրել դեղորայքային ռինիտի զարգացում, են

Ա-արծաթի պատրաստուկները

Բ-սուլֆանիլամիդները

Գ-դեկոնգեստանտները

Դ-տեղային գլյուկոկորտիկոստերոիդները

351. Լսողական ոսկրիկների շղթայի խզման համար ճիշտ տիմպանոգրամը _____ տիպն է.

Ա-Ad

Բ-A

Գ-C

Դ-B

352. Շշուկային խոսքի ուժը միջին հաշվով կազմում է (դեցիբելով).

Ա-30

Բ-10

Գ-60

Դ-90

353. Հարքթային խոռոչների պատերի՝ լորձաթաղանթի պատռումով ուղեկցվող կոտրվածքի հավաստի նշանն է.

Ա-վերքի առկայությունը խոռոչի պրոյեկցիայում

Բ-ոսկրային բեկորների կրեպիտացիան

Գ-դեմքի և (կամ) ակնակապճի փափուկ հյուսվածքների էմֆիզեման

Դ-քթից արյունահոսությունը

354. Միջին ականջի քաղցկեղի առավել արդյունավետ բուժումն է.

Ա-քիմիաթերապիան

Բ-վիրաբուժականը

Գ-համակցվածը

Դ-ճառագայթային թերապիան

Սկզբնաղբյուրներ՝

1. Болезни Ухо, Горло, Носа в Детском Возрасте под редакцией члена - корреспондента РАН Н.А. Дайхеса, профессора А.С Юнусова, профессора М.М.Полунина. 2-е издание
2. Отоларингология под редакцией академика РАН Ю.К.Янова, члена - корреспондента РАН А.И.Крюкова, профессора В.В Дворянчикова , профессора Е.В.Носули. 2-е издание
3. Cummings Otolaryngology 8-e, 2025 9780443119842
4. Scott-Brown's ORL-HNS 9-e, 2026 9781032535074
5. Cummings Review of Otolaryngology 2-e, 2023 9780323776103
6. Pasha Clinical Reference Guide 7-e, 2026 Plural Publishing
7. Bailey's Head & Neck Surgery Review 2-e Wolters Kluwer